ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԱՂՈՐԴՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»,

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»,

«ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բովանդակություն

1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ …….3

2. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ …….31

3. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ …….51

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

PUBLIC TV COMPANY OF ARMENIA

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն իր գործունեության շրջանակներում պատրաստում և հեռարձակում է բազմազան թեմատիկ հեռուստահաղորդումներ՝ նպատակ ունենալով առավելագույնս բավարարելու հասարակության տարբեր շերտերի և սոցիալական խմբերի հեռուստատեսային պահանջմունքները, միաժամանակ ապահովելով հանրության՝ տեղեկացված լինելու սահմանադրական իրավունքը:

Հանրային հեռուստաընկերությունը հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման գործընթացում առաջնորդվում է «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով, իր կանոնադրությամբ և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով:

2025 թվականին հեռուստաընկերությունը պատրաստել և օրական 24 ժամ հեռարձակել է հեռուստահաղորդումներ «Առաջին ալիք», «Առաջինի միջազգային», «Առաջինի լրատվական» և «Առաջին ալիք Ամերիկա» տեսալսողական ծրագրերով:

ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

2025 թվականի ընթացքում Առաջին ալիք, Առաջինի միջազգային, Առաջին ալիք Ամերիկա և Առաջինի լրատվական ալիքներից յուրաքանչյուրի եթերում հեռարձակվել են համապատասխանաբար 8 740, 8 740, 8740 և 8 742 ժամ ընդհանուր տևողությամբ հեռուստահաղորդումներ՝ համաձայն ստորև բերված աղյուսակում նշված տեսալսողական ծրագրերի առանձին բաժինների և հեռարձակման ծավալների:

Աղյուսակ 1

2025 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների ծավալները՝ ըստ տեսալսողական ծրագրերի առանձին բաժինների

Հ/Հ	Տեսալսողական ծրագրերի առանձին բաժիններ	Տեսալսողական ծրագրերի առանձին բաժինների հեռարձակման ծավալ (ժամ)
	Առաջին ալիք	**8 740**
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	757.1
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	1 404.7
3	Մշակութային	1 638.1
4	Կրթական, մանկապատանեկան	584.0
5	Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության	266.4
6	Մարզական	198.6
7	Երաժշտական	1 032.5
8	Զվարճալի – ժամանցային	2 383.5
9	Հոլովակներ, այլ հաղորդումներ	475.1
	Առաջինի միջազգային ալիք	**8 740**
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	976.1
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	1 673.1
3	Մշակութային	1 688.7
4	Կրթական, մանկապատանեկան	518.2
5	Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության	379.7
6	Մարզական	86.0
7	Երաժշտական	989.4
8	Զվարճալի – ժամանցային	2 278.2
9	Հոլովակներ, այլ հաղորդումներ	150.6
	Առաջինի լրատվական ալիք	**8 742**
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	2 520.1
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	3 865.2
3	Մշակութային	1 318.4
4	Կրթական	461.3
5	Մարզական	172.0
6	Հոլովակներ, այլ հաղորդումներ	405.0
	Առաջին ալիք Ամերիկա	**8 740**
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	813.7
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	418.3
3	Մշակութային	1 675.0
4	Կրթական, մանկապատանեկան	350.7
5	Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության	455.0
6	Մարզական	80.0

Հ/Հ	Տեսալսողական ծրագրերի առանձին բաժիններ	Տեսալսողական ծրագրերի առանձին բաժինների հեռարձակման ծավալ (ժամ)
7	Երաժշտական	2 689.8
8	Զվարճալի - ժամանցային	2 066.7
9	Հոլովակներ, այլ հաղորդումներ	190.8

Հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների ծավալների տեսակարար կշիռները՝ ըստ տեսալսողական ծրագրերի առանձին բաժինների, ներկայացված են ստորև նշված գծապատկերներում:

Գծապատկեր 1. 2025 թվականին Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (%)



Գծապատկեր 2. 2025 թվականին Հանրային հեռուստաընկերության Առաջինի միջազգային ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (%)



Գծապատկեր 3. 2025 թվականին Հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (%)



Գծապատկեր 4. 2025 թվականին Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք Ամերիկա ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (%)



«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ», «ԱՌԱՋԻՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԼԻՔ», «ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ ԱՄԵՐԻԿԱ» ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ

Լրատվական, լրատվական-վերլուծական հաղորդումներ

«Լուրեր»

Հանրային հեռուստաընկերության լրատվական ծառայության կողմից պատրաստվող «Լուրեր» լրատվական հաղորդումները աշխատանքային օրերին հեռարձակվել են օրական չորս անգամ, շաբաթ օրը՝ 2 անգամ, իսկ երեկոյան լուրերը ամփոփվել և ներկայացվել են հիմնական թողարկմամբ: Լրատվական թողարկումների ընթացքում համակողմանիորեն լուսաբանվել են Հայաստանում և աշխարհում տեղի ունեցած իրադարձությունները: Լրատվական ծառայությունն օպերատիվ աշխատանքն իրականացրել է ինչպես Երևանում տեղակայված կենտրոնակայանի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում, ԱՄՆ-ում, ՌԴ-ում, Եվրոպայի մի շարք պետություններում, Մերձավոր Արևելքում և այլ երկրներում գործող թղթակիցների միջոցով, որոնք ապահովել են անաչառ և օպերատիվ լրահոս:

«Կիրակնօրյա լուրեր»

Կիրակնօրյա լրատվական-վերլուծական թողարկումը ներկայացնում է շաբաթվա կարևորագույն իրադարձությունները: Դրանք վերաբերում են այն իրադարձություններին, որոնք ամբողջ շաբաթ եղել են Հայաստանի ու աշխարհի ուշադրության կենտրոնում, և այն երևույթներին, որոնք այդ օրերին մնացել են չլուսաբանված, սակայն կարևոր են հանրային իրազեկման տեսանկյունից: Կիրակնօրյա ամփոփիչ թողարկումները հեռարձակվում են նաև Հանրային հեռուստաընկերության Առաջին լրատվական ալիքով:

Քաղաքական, տնտեսական, հասարակական հաղորդումներ

«Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ»

Պետրոս Ղազարյանի հեղինակային հաղորդման հյուրերն են պետական, քաղաքական, հասարակական, մշակութային գործիչներ՝ ինչպես հայ, այնպես էլ օտարերկրացի, որոնց հետ բաց և հանգամանալից քննարկվում են տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ ոլորտների կարևոր ու հրատապ տարբեր թեմաներ: Հաղորդաշարը հեռարձակվում է նաև Հանրային հեռուստաընկերության Առաջին լրատվական ալիքով:

«Հանրային քննարկում Տաթև Դանիելյանի հետ»

Յուրաքանչյուր շաբաթ Հանրային հեռուստաընկերությունը հնարավորություն է տալիս հեռուստադիտողին ականատես լինելու ներքաղաքական ամենաթեժ քննարկումներին: Հաղորդումը քննարկում է շաբաթվա կարևորագույն քաղաքական, սպորտային, տնտեսական, սոցիալական

իրադարձությունները: Հաղորդաշարը հեռարձակվում է նաև Հանրային հեռուստաընկերության Առաջին լրատվական ալիքով:

«Մեծ բանավեճ»

Ամեն կիրակի հաղորդավարներ Պետրոս Ղազարյանը և Տաթև Դանիելյանը բանավեճի ձևաչափով քննարկման են հրավիրում իշխանության, ընդդիմության, քաղաքացիական հասարակության և փորձագիտական հանրույթի ներկայացուցիչներին՝ քննարկելու երկրի ամենասուր ներքաղաքական և արտաքին քաղաքական հարցերը:

«Զինուժ»

Շաբաթական մեկ անգամ Հանրային հեռուստաընկերության եթերում է ՀՀ ՊՆ տեղեկատվության վարչության «Զինուժ» ծրագիրը, որը ներկայացնում է բանակի շաբաթվա առօրյան, միջազգային ռազմաքաղաքական շփումները՝ մարտական հերթապահություն, զորամասային կյանք, զորավարժություններ, զինվորական ճակատագրեր, զինվոր-հրամանատար փոխհարաբերություններ, պատմամշակութային նյութեր:

«Խորհրդարանական շաբաթ»

Ազգային ժողովի լրատվական ծառայության կողմից պատրաստվող հաղորդաշարը Հանրային հեռուստաընկերության եթերում յուրաքանչյուր շաբաթ լուսաբանում է խորհրդարանի աշխատանքը: Հաղորդման ընթացքում խորհրդարանական խմբերն ու խմբակցությունները կանոնակարգված ժամանակահատվածում լայն հանրության համար բարձրաձայնում են իրենց համար տեսանելի խնդիրներն ու առաջարկությունները:

«02»

ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության «02» հաղորդաշարը նպաստում է հասարակության իրավագիտակցության բարձրացմանը: Հաղորդաշարը ներկայացնում է օպերատիվ նկարահանումներ դեպքի վայրից, հանցագործությունների բացահայտումներ, օպերատիվ հետախուզական և քննչական միջոցառումների իրական դեպքեր, շաբաթվա քրեական քրոնիկոնը, առանձին հանցատեսակների մասին թեմատիկ հաղորդումներ, ինչպես նաև պաշտոնական միջոցառումներ լուսաբանող ռեպորտաժներ:

«Առավոտ լուսո»

Յուրաքանչյուր աշխատանքային օր Առաջին ալիքի առավոտյան եթերը մեկնարկում է «Առավոտ լուսո» հաղորդաշարով. այստեղ առկա են միանգամից մի քանի ժանրեր՝ հարցազրույց, սյուժե, ակնարկ, լրատվություն, ռեպորտաժ: Հաղորդաշարի նպատակն է հեռուստադիտողին հաղորդել օրվա ռիթմը, կենդանի երաժշտություն, հետաքրքիր տեղեկություններ օրվա հասարակական և մշակութային անցուդարձի վերաբերյալ, ինչպես նաև բազմազան թեմաների շուրջ հետաքրքիր հարցազրույցներ տարբեր ոլորտների ճանաչված մարդկանց հետ:

«Հրապարակում»

ՀՀ կառավարության կողմից տրամադրված հաղորդաշարը լուսաբանում է ՀՀ կառավարության գործունեությունը՝ հնարավորինս ամբողջական, սպառիչ և հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն հաղորդելով շաբաթվա ընթացքում կառավարության ընդունած կարևորագույն որոշումների, քննարկումների մասին: Հաղորդաշարը միաժամանակ ներկայացնում է

գործադիր իշխանության տնտեսական քաղաքականությունը, տարբեր ոլորտներում դրա իրականացման ընթացքն ու արդյունքները:

«Նվիրյալները»

Հաղորդաշարը նվիրված է վերջին տարիների մարտական գործողությունների ընթացքում վիրավորում ստացած զինվորականներին՝ շարքայինից մինչև սպայական անձնակազմ: Հաղորդաշարի ընթացքում հարցազրույցի և ռեպորտաժի ձևաչափով պատմվում է վիրավորում ստացած զինվորականների ապաքինման, հետպատերազմական ապրումների մասին:

«Սպասիր ինձ» և «Սպասիր ինձ Ամերիկա»

Մասշտաբային հեռուստանախագիծ, որը յուրահատուկ միջոցներով հեռուստադիտողին թույլ է տալիս հաղորդակից լինել մարդկային ճակատագրերին ու պատմություններին: Յուրաքանչյուր շաբաթ հեռուստադիտողը ականատես է լինում անհավանական մարդկային ճակատագրերի և պատմությունների: Տարիների պատմություն ունեցող այս հաղորդաշարը անտարբեր չի թողնի ոչ մեկին՝ ցուցադրելով խորհրդավոր պատմություններ, անարդյունք որոնումներ և, վերջապես, դրամատիկ հանգուցալուծում:

«Մերոնք»

Հաղորդումը պատմում է աշխարհի տարբեր երկրներում ապրող ու գործունեություն ծավալող հայերի մասին, որոնք իրենց աշխատանքով մեծ համբավ են բերում Հայաստանին: Անդրադարձ է կատարվում աշխարհի տարբեր երկրներում ձևավորված հայկական համայնքներին:

«Երևան»

Երևանի քաղաքապետարանի կողմից պատրաստվող հաղորդաշարը լուսաբանում է Երևանի քաղաքապետարանի գործունեությունը. ներկայացվում են վերջինիս ենթակայությամբ գործող կառույցների աշխատանքները, տարբեր ոլորտներում առկա խնդիրները և դրանց լուծման ընթացքը, ինչպես նաև մանրամասներ քաղաքային տնտեսության կառավարման տարբեր ոլորտներից:

«Հայրենակից»

«Հայրենակից» հաղորդաշարը նվիրված է արտերկրից Հայաստան վերադարձած մեր հայրենակիցների կյանքին վերաբերող սոցիալական, մշակութային կարևոր հարցերին և Հայաստանում նրանց ինտեգրման գործընթացին:

«Մեր ժամանակների հերոսը»

ՀՀ կառավարության կողմից տրամադրված ֆիլմաշարերը պատմում են այն մարդկանց մասին, որոնք իրենց աշխատանքով քայլ առ քայլ կերտում են լավատեսության հաղթանակը Հայաստանի Հանրապետությունում:

«Այլ ոճով»

Հաղորդաշարի ընթացքում նորաձևության մասնագետների օգնությամբ թարմացվում է հյուրերի զգեստապահարանը՝ կախված նրանց ոճային նախասիրություններից:

«Եղիր առողջ»

Հաղորդման նպատակն է բացահայտել, պարզաբանել հանրության շրջանում առավել տարածված հիվանդությունները՝ խոսելով դրանց նախանշանների, ռիսկի գործոնների և բուժման հնարավոր մեթոդների մասին: Հաղորդումը ներառում է նաև ժամանցային շոու կոմպոնենտ, որը հնարավորություն

է տալիս հանրությանը լինել ավելի իրազեկ, ունենալ բժշկական որոշակի գիտելիքներ, լինել կրթված և հետևել սեփական առողջությանը:

«Փորձերոն»

Մանկական ճանաչողական հաղորդաշար, որի ընթացքում մասնագետների օգնությամբ երեխաները կբացահայտեն իրենց հուզող հարցերը՝ սոցիալական հոգեբանությունից մինչև ճշգրիտ գիտություններ:

«Պատվերով համերգ»

Հաղորդաշարի շրջանակներում Առաջին ալիքի նկարահանող խումբը հայտնի երգչի կամ բենդի հետ, անակնկալ համերգային ծրագրով այցելում է նախօրոք՝ Առաջին ալիքի ստեղծագործական թիմին ուղարկված նամակի հասցեատիրոջը:

«Այլ կերպ»

«Այլ կերպ» հեռուստախաղը հիմնված է համանուն սեղանի խաղի վրա: Սա հայկական առաջին հեռուստատեսային բառախաղն է, որտեղ հայտնի մասնակիցները պետք է գուշակեն գաղտնաբառը և հաղթահարելով 3 փուլ իրենց ուժերը փորձեն սուպերխաղում: Հաղթում է այն թիմը, որը կգուշակի ամենաշատ թվով բառերը:

«Հայաստանի մարդիկ»

Հաղորդում, որը ներկայացնում է Հայաստանի տարբեր քաղաքների/համայնքների մշակույթը/պատմությունը գիտական, հասարակական և մշակութային տարբեր ոլորտների ամենահեղինակավոր մասնագետների/արվեստագետների, կենսագրական և ստեղծագործական պատմությունների միջոցով:

«Հայկական հետք Ամերիկայում»

Սոս Ջանիբեկյանը փորձում է պարզել, թե ինչ հետք են թողել տարբեր սերունդներ և մասնագիտություններ ներկայացնող մեր հայրենակիցները ԱՄՆ մշակութային, հասարակական կյանքում:

«Ծնողական ժողով»

ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համատեղ պատրաստվող սույն հաղորդաշարը ներկայացնում է ծնողավարության արդի հարցերը, խնդիրներն ու վերջինիս լուծման եղանակները:

Մշակութային հաղորդումներ

«5 րոպե արվեստ»

Հաղորդաշարը պատմում է Հայաստանում ապրող և ստեղծագործող արվեստագետների մասին: Մեր կողքին ստեղծագործող բազմաժանր արվեստագետները պատմում են արվեստն ընտրելու, ստեղծագործելու, արվեստում ունեցած սկզբունքների մասին: Նախագծի առաքելությունն է վավերագրել մեր ժամանակներում ապրող ու ստեղծագործող անհատներին, զարգացնել հեռուստադիտողի գեղագիտական ճաշակն ու հաղորդակից դարձնել արվեստին:

«Հեռուստաներկայացում»

Հանրային հեռուստատեսությունը թվայնացրել և արդիականացրել է իր արխիվում գտնվող մի շարք հեռուստաներկայացումներ և պարբերաբար եթեր հեռարձակել դրանք: Միաժամանակ նկարահանվում ու ցուցադրվում են նաև նոր ներկայացումներ, որոնք այսօր պահանջարկ ունեն հայաստանյան թատրոններում:

«Հանդիպում առաջինում»

Հաղորդաշարը ներկայացնում է ականավոր հայ մարդկանց, որի շրջանակներում հաղորդավարը և հրավիրված հյուրերը կիսվում են հաղորդման հերոսի մասին իրենց պատմություններով:

«Էթնոգույներ»

Հաղորդաշարը նվիրված է Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնություններին: Նպատակ ունի առավել դիտարժան կերպով ներկայացնել համայնքների կյանքը, ավանդույթները, մշակութային առանձնահատկությունները, ազգային սովորույթները, կրոնը, լեզուն, խոհանոցը և այլն:

Ֆիլմեր և մշակութային այլ հաղորդումներ

2025 թվականին Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է հեռարձակել հայրենական և արտասահմանյան հայտնի կինոարտադրող ընկերությունների արտադրության թե՛ արդեն սիրված և թե՛ ժամանակակից գեղարվեստական ու վավերագրական ֆիլմեր, ինչպես նաև լուսաբանել մշակութային տարաբնույթ միջոցառումներ և փառատոններ՝ ցուցահանդեսներ, մրցանակաբաշխություններ, տարբեր ոլորտների հայ անվանի գործիչների հոբելյանական երեկոներ, փառատոններ և նշանակալի մշակութային այլ միջոցառումներ:

Կրթական, մանկապատանեկան հաղորդումներ

«Մեդիագրագիտություն»

Հաղորդաշարն ուղղված է ընդհանուր համացանցային գիտելիքների և մեդիագրագիտության բարձրացմանը: Սամվել Մարտիրոսյանը ներկայացնում է համացանցից օգտվելու հիմնական սկզբունքները, ինչպես նաև հանրությանը տեղեկացնում մեդիա վտանգների մասին:

«Արկածների հետքերով»

Մանկական ճանաչողական հաղորդաշար, որի ընթացքում հաղորդավարը՝ ռոբոտը, 4 հոգուց բաղկացած երեխաների թիմին պատմում է իրերի և դրանց ծագման, աշխարհի 7 հրաշալիքների, հռչակավոր կառույցների, պատմական իրադարձությունների մասին: Երեխաների թիմը հաղորդման ընթացքում մեկնում են Հայաստանի տարբեր անկյուններ՝ բացահայտելու իրենց սպասվող գաղտնիքները:

«Զանգակ բամբակ»

Հաղորդաշարը ներկայացնում է Հայաստանի տարբեր հատվածներում ապրող ամուսնական զույգերի, որոնք միասին անցել ենք համատեղ կյանքի երկար ճանապարհ: Հաղորդման ընթացքում ամուսինները պատմում են իրենց ծանոթության, ամուսնական կյանքի երջանիկ և բարդ կողմերի մասին: Այս ամենը զուգակցվում է Հայաստանի տարբեր բնակավայրերին յուրահատուկ կոլորիտով:

Մուլտֆիլմեր և կրթական այլ հաղորդումներ

2025 թվականի ընթացքում Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է հեռարձակել ինչպես արտասահմանյան հայտնի, այնպես էլ հայ դասական ու սիրված մուլտֆիլմեր:

Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության մասին հաղորդումներ

«Օտար, ամայի ճամփեքի վրա»

Հաղորդաշարը յուրատեսակ հեռուստատեսային նախագիծ է, որը հեռուստադիտողին ուղեկցում է աշխարհի զանազան երկրներով ու քաղաքներով: Այս հեռուստանախագիծը հնարավորություն է տալիս ոչ միայն ճանաչելու աշխարհի պատմաճարտարապետական հուշարձաններն ու տեսնելու տեսարժան վայրերը, այլև ծանոթանալու համաշխարհային քաղաքակրթության մշակութային առանձնահատկություններին:

«Հատուկ գործ»

«Հատուկ գործ» հաղորդաշարն ամեն թողարկման ընթացքում փորձում է անդրադառնալ անցյալի առեղծվածային, նշանակալից իրադարձություններին և երևույթներին:

Փաստավավերագրական ֆիլմեր

2025 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել են հայրենական և արտասահմանյան արտադրության տարբեր կարևոր իրադարձությունների և անձանց վերաբերող փաստավավերագրական ֆիլմեր:

Մարզական հաղորդումներ

«Սպորտ ռինգ»

Սպորտային վերլուծական հաղորդաշար, որի ընթացքում հեռուստահաղորդավարները բանավեճի ֆորմատով քննարկում են վերջին օրերի ամենակարևոր սպորտային իրադարձությունները:

«Շաբաթվա սպորտ»

Կարեն Գիլոյանը յուրաքանչյուր շաբաթ ներկայացնում է հայկական սպորտային կյանքի ամենահրատապ ու կարևորագույն թեմաները: Հաղորդման ուշադրության կենտրոնում է լինելու տվյալ շաբաթվա ամենաքննարկվող թեման, որի շուրջ հարցերը պարզաբանելու են հրավիրված մասնագետները:

Մարզական այլ հաղորդումներ

2025 թվականին Հանրային հեռուստաընկերությունը հեռարձակել է հայ ծանրորդների ու ըմբիշների մրցելույթները տարբեր մրցաշարերում, ինչպես նաև հայկական ակումբային ֆուտբոլի եվրոպական մրցաշարերի նախաորակավորման հանդիպումները:

Երաժշտական հաղորդումներ

«Երգ երգոց»

«Երգ երգոց»-ը բազմաժանր երաժշտական հաղորդում է, որտեղ արդեն հայտնի և նորահայտ երգիչները ըստ թողարկման թեմաների կատարում են հին ու նոր երգեր:

Համերգներ և երաժշտական այլ հաղորդումներ

2025 թվականին Հանրային հեռուստաընկերությունը հեռարձակել է հայրենական և միջազգային խոշոր երաժշտական նախագծեր, ինչպիսիք են Եվրատեսիլ, Մանկական Եվրատեսիլ, Պատանի երաժիշտների Եվրատեսիլ, Վիեննայի ֆիլհարմոնիկ նվագախմբի հատուկ համերգները, հայ հեղինակավոր կոմպոզիտորներին և երաժիշտներին նվիրված հոբելյանական տարբեր համերգներ, հայտնի օպերաներ և այլն:

Զվարճալի - ժամանցային հաղորդումներ

«Պատրաստենք միասին»

Հաղորդաշարի շրջանակներում հեղինակը ներկայացնում է նոր բաղադրատոմսեր, իր յուրահատուկ ոճով և հետաքրքիր մտահղացումներով պատրաստում է ինչպես ավանդական ուտեստներ հայկական և համաշխարհային խոհանոցներից, այնպես էլ իմպրովիզացիոն եղանակով ստեղծված կամ վերափոխված այլ ուտեստներ, որոնք արագ և հեշտ կարող է պատրաստել յուրաքանչյուրը:

«Առավոտ լուսո.weekend»

Ժամանցային հաղորդաշար, որին հյուրընկալվում են հայտնի և սիրված մարդիկ և որի ընթացքում անդրադարձ է արվում անսովոր թեմաների: Հաղորդաշարը եթեր է հեռարձակվում շաբաթ և կիրակի օրերին:

«Երկու աստղ»

Հանրային հեռուստաընկերության կողմից տեղայնացված միջազգային ձևաչափի հեռուստաշոու, որի լիցենզիան ձեռք է բերվել BBC Worldwide-ից: Գունեղ դեկորներով և հանդերձանքներով ներկայացման ընթացքում աստղային զույգերը ժյուրիի դատին են ներկայացնում երաժշտական համարներ՝ ինքնատիպ բեմադրություններով:

«Հիշաչար երեկո»

Հաղորդաշարի հաղորդավարը հրավիրված հայտնի հյուրերի հետ միասին կազմակերպում է խաղեր, որոնց առանցքում հիշողությունն է, ինչպես նաև այն, թե հաղորդաշարի ընթացքում ներկայացվող հարցերից ու պատմություններից ինչքան մասը հնարավոր կլինի մտաբերել: Խաղի արդյունքում հյուրերից մեկը դառնում է հաղթող:

«Դիմակահանդես»

Հանրայինի կողմից ձեռք բերված լիցենզիայով, համաշխարհային King of Mask Singer ձևաչափի հիման վրա տեղայնացված երաժշտական շոու նախագծի երրորդ եթերաշրջանի շրջանակներում ժյուրին փորձում է գուշակել կերպարային դիմակների հետևում թաքնված հայտնի արտիստների:

«Կինո կինո»

Հաղորդաշարի մասնակիցները խաղի տարբեր փուլերում ցույց են տալիս իրենց գիտելիքները համաշխարային ու հայրենական կինոյի վերաբերյալ:

«Թույլ օղակ»

BBC ընկերության ամենահայտնի ձևաչափի հիման վրա պատրաստված ինտելեկտուալ նախագիծ, որի յուրաքանչյուր հաղորդման ընթացքում 8 մասնակիցներից միայն մեկը ինտելեկտուալ և համառ պայքարում մինչև 2 միլիոն դրամ հաղթելու հնարավորություն է ունենում:

«Ai քեզ Նոր տարի. Ամանորի գիշերը

Հանրայինի կողմից պատրաստված ամանորյա լիամետրաժ գեղարվեստական ֆիլմ-կատակերգություն՝ ամանորյա մոտիվներով, որի սյուժեի կենտրոնում արհեստական բանականությամբ աշխատող ժամանակի մեքենայի խափանումն է, որը հեռուստադիտողին ֆիլմի հերոսների հետ միասին տեղափոխում է ապագա:

Զվարճալի - ժամանցային այլ հաղորդումներ

2025 թվականի ընթացքում Առաջին ալիքը հեռարձակել է նաև զգալի դիտողականություն ապահովող արտասահմանյան արտադրության բազմասերիանոց ֆիլմեր, ամերիկյան կինոակադեմիայի ամենամյա Օսկար մրցանակաբաշխությունը և այլն:

«ՖԵՍՏԻՎԱՌ» երաժշտական-զբոսաշրջային փառատոն

Հանրային հեռուստաընկերությունը, ԿԳՄՍ նախարարության հետ համատեղ 2025 թվականին 3 մարզում անցկացրել է «Ֆեստիվառ» երաժշտական-զբոսաշրջային փառատոնը՝ նպատակ ունենալով զարգացնել տուրիզմը, նպաստել մշակութային կյանքի ապակենտրոնացմանը, հանրահռչակել տեղի արտիստների և համայնքային փոքր տնտեսությունների գործունեությունը: Արտաշատում, Հրազդանում և Արմավիրում կազմակերպվել են մեծամասշտաբ համերգներ, որոնց մասնակցել են 2 տասնյակից ավելի արտիստներ և բենդեր: Փառատոնների մասին պատմող տեսանյութերը, ինչպես նաև համերգները ցուցադրվել են «Առաջինի» եթերում:

ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Լրատվական, լրատվական վերլուծական

«Լուրեր»

«Լուրեր»-ը Առաջինի լրատվական ալիքի գլխավոր լրատվական ծրագիրն է, որն ամեն գլխաժամի ներկայացնում է ամենաթարմ տեղեկատվությունը տարածաշրջանում և աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: Լրատվական թողարկումների ընթացքում համակողմանիորեն լուսաբանվում են Հայաստանում և աշխարհում տեղի ունեցած և տեղի ունեցող իրադարձությունները: Լրատվական ծառայությունն օպերատիվ աշխատանքն իրականացնում է ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում, ԱՄՆ-ում, ՌԴ-ում, Եվրոպայի մի շարք պետություններում, Մերձավոր Արևելքում և այլ երկրներում գործող թղթակցական կետերի միջոցով, որոնք ապահովում են անաչառ և օպերատիվ լրահոս:

«Կիրակնօրյա ամփոփիչ լուրեր»

«Կիրակնօրյա լուրերը» ներկայացնում է շաբաթվա կարևորագույն իրադարձությունների ամփոփ պատկերը:

«Այլ հայացք»

«Այլ հայացքը» անդրադառնում է ներքին քաղաքական, տարածաշրջանային և համաշխարհային իրադարձություններին՝ փորձելով հիմքում դնել ոչ թե համընդհանուր ընդունված տեսակետները, այլ սեփական տեսանկյունից զարգացումների ներկայացումը:

Քաղաքական, տնտեսական, հասարակական

«Տնտեսական լուրեր»

«Լուրերի» տնտեսական հավելվածը ներկայացնում է Հայաստանում իրականացվող գործարար միջավայրի բարելավմանը նպաստող ծրագրերը, տնտեսության մեջ առկա խնդիրներն ու ձեռքբերումները: Անդրադարձ է կատարվում նաև երկրում իրականացվող ներդրումներին ու այլ երկրների հետ առևտրային փոխհարաբերություններին:

«Սոցիալական ու առողջապահական լուրեր»

«Լուրերի» առողջապահության և սոցիալական հավելվածը ներկայացնում է սոցիալական ու առողջապահության ոլորտներում իրականացվող պետական ծրագրերը, կառավարության որոշումները և համապատասխան օրենսդրական փոփոխությունները: Անդրադարձ է կատարվում նաև ոլորտում իրականացված բարեփոխումներին, առողջապահական ձեռքբերումներին և մարդկանց, որոնք գտել են

սոցիալական խնդիրները հաղթահարելու, հասարակությանն ինտեգրվելու իրենց բանաձևը:

«Միջազգային լուրեր»

«Լուրերի» միջազգային հավելվածը ներկայացնում է միջազգային հարթակներում, տարբեր երկրների միջպետական հարաբերություններում, այլ երկրներում տեղի ունեցող առավել ուշագրավ իրադարձությունները: Միջազգային լուրերը ներկայացվում են հավասարակշռված՝ ներառելով կարծիքներ և դիրքորոշումներ շահերի և հետաքրքրությունների բախում ունեցող երկրներից ու կազմակերպություններից:

«Արևմտահայերեն լուրեր»

«Լուրերի» արևմտահայերեն հավելվածը արևմտահայերեն մեկնաբանությամբ ներկայացնում է Հայաստանում, հարևան երկրներում, ինչպես նաև միջազգային հարթակներում տեղի ունեցող սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլ բնույթի առավել ուշագրավ իրադարձությունները:

«Հարևաններ»

«Հարևաններ» հավելվածը ներկայացնում է Հայաստանի հարևան երկրների՝ Վրաստանի, Իրանի, Թուրքիայի և Ադրբեջանի ներքին և միջպետական հարաբերություններում տեղի ունեցող առավել ուշագրավ իրադարձությունները:

«Հարցազրույց Աննա Դանիելյանի հետ»

Հաղորդավարն օրվա ոչ հրատապ, սակայն, այդուհանդերձ, կարևոր թեմաների շուրջ մասնագիտական զրույցներ է վարում հյուրի հետ՝ երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական, գիտական, կրթական, մշակութային և այլ հարթակների տեղեկատվական հոսքերի վերաբերյալ:

«Գործադիրը»

«Գործադիրը»-ը լուսաբանում է ՀՀ կառավարության գործունեությունը: Ներկայացվում են կառավարության ընդունած որոշումների հանրային նշանակությունն ու ակնկալվող արդյունքները, տարբեր ոլորտներում գործադիր իշխանության ծրագրերի իրագործման ընթացքն ու փաստացի արդյունքները:

«Այլ լուրեր»

«Այլ լուրեր»-ը ժամանցային-լրատվական ծրագիր է, որը ներկայացնում է աշխարհի տարբեր երկրներում անցկացվող փառատոններ, մշակութային այլ իրադարձություններ, ֆլեշմոբեր, շքերթներ, ինքնատիպ ցուցահանդեսներ, զարմանալի ռեկորդներ, արտառոց դեպքերի մասին պատմություններ, արտասովոր ու զվարճալի մրցույթներ և այլն: Հատուկ ուշադրություն է դարձվում նորարարական ուղղվածություն ունեցող լուրերին, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գրանցված միջազգային ձեռքբերումներին:

«Photoլուր»

Իրադարձությունները լուսաբանվում են ֆոտո-ռեպորտաժի միջոցով: Հիմնականում օգտագործվում են գերատեսչություններից ստացված լուսանկարները և պաշտոնական հաղորդագրությունները: Հավելվածում տեղ են գտնում այնպիսի տեղեկություններ, որոնք եթերում չեն հեռարձակվել:

«Ինֆոգռաֆ

Անիմացիոն տեսանյութ, որտեղ ներկայացվում են Հայաստանի և միջազգային սոցիալ-տնտեսական տարբեր վիճակագրական ցուցանիշներ՝ հիմնված Վիճակագրական կոմիտեի, միջազգային հեղինակավոր կառույցների զեկույցների և ցուցիչների վրա:

«Փոխարժեք»

Անիմացիոն տեսանյութ, որտեղ ներկայացվում է դրամի և մի քանի փոխարկելի արժույթների (դոլար, եվրո, ռուբլի, ֆունտ ստեռլինգ) թարմացված տվյալները՝ հիմնվելով Կենտրոնական բանկից ստացված տեղեկատվության վրա:

«Առանց մեկնաբանության»

Հայաստանում և այլ երկրներում տեղի ունեցող իրադարձությունները լուսաբանվում են առանց մեկնաբանության' միայն տեսաշարով, որն ուղեկցվում է կարճ նկարագրով:

«Նոր ծնունդներ»

Տեղեկատվական տեսանյութեր, որտեղ ներկայացվում է նախորդ օրը հանրապետությունում գրանցված ծնունդների թիվը:

«Եղանակի տեսություն»

Անիմացիոն տեսանյութ, որտեղ ներկայացվում է Հայաստանում առաջիկա հինգ օրերին սպասվող եղանակը:

«Հայտարարագիր»

Բարձրաստիճան պաշտոնյաների և նրանց հետ փոխկապակցված անձանց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացրած հայտարարագրերի հրապարակում: Անիմացիոն տեսանյութ, որտեղ ներկայացվում է պաշտոնյայի գույքի, եկամուտների վերաբերյալ բաց աղբյուրից ստացած տեղեկատվությունը:

«Խոշոր հարկատուներ»

Անիմացիոն տեսանյութ, որտեղ ներկայացվում են ՀՀ խոշոր հարկատուների վերաբերյալ տեղեկատվություններ. կարճ ամփոփագիր, թե որքան հարկ են վճարել և հարկատուների ցուցակում որ տեղն են զբաղեցնում:

«ՀՀ Կառավարություն»

ՀՀ Կառավարության նիստերի ընթացքում օրակարգային հարցերի և հնչած կարևոր ելույթների հրապարակում, ինչպես նաև ուղիղ եթերների հեռարձակում:

«Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ»

Պետրոս Ղազարյանը օրվա ընթացքում տեղի ունեցած առավել նշանակալի իրադարձությունների մասին զրուցում է հրավիրված հյուրի հետ:

«Հանրային քննարկում»

Տաղավարում ամենատարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչները, ոլորտային փորձագետներն ու պաշտոնյաները մեկնաբանում են ակտուալ իրադարձությունները:

«Ամբիոն»

ԱԺ-ում նստաշրջանների, կառավարության հարց ու պատասխանի ընթացքում հնչած կարևոր ելույթների հրապարակում:

«Մեծ բանավեճ»

Պետրոս Ղազարյանը և Տաթև Դանիելյանն ամեն կիրակի երկրի համար կարևորագույն խնդիրները քննարկում են քաղաքական գործիչների, փորձագետների ու քաղհասարակության ներկայացուցիչների հետ՝ հեռուստադիտողին տալով կողմնորոշվելու հնարավորություն:

«Օրակարգում»

Դիանա Գասպարյանը շաբաթվա ընթացքում տեղի ունեցած առավել նշանակալի իրադարձությունները վերլուծում է միջազգային եւ տեղական մասնագետների հետ:

«Ռեպորտաժ»

«Լուրերի» ռեպորտաժ հավելվածը ներառում է տեսանյութեր Հայաստանում և այլ երկրներում տեղի ունեցող իրադարձություններից, պաշտոնատար անձանց ելույթներ և այլն:

«Հարցազրույց/տեղեկատվական/»

Հարցազրույցների մասնակցում են պաշտոնյաներ և փորձագետներ՝ կախված երկրում և երկրից դուրս տեղի ունեցող իրադարձությունները: Հարցազրույցների շրջանակում անդրադարձ է լինում բուն իրադարձային կամ ոլորտային թեմային, Հայաստանի և այլ երկրների հարաբերություններին, հայ համայնքների գործունեությանը, մշակութային կյանքին և այլն:

«Օրվա թվեր»

Անիմացիոն տեսանյութեր, որտեղ ներկայացվում են ՀՀ սոցիալ-տնտեսական տարբեր ոլորտներին վերաբերող թվական տվյալներ:

Կրթական

«Գիտության և կրթության լուրեր»

«Լուրերի» գիտության և կրթության հավելվածը տեղեկացնում է գիտական և կրթական ոլորտում կարևոր իրադարձությունները, ներկայացնում հայ գիտնականների նորարարությունները, իրականացվող գիտական կարևոր ծրագրերն ու գիտության և կրթության ոլորտների խնդիրները, դրանց լուծման ուղղությամբ կատարվող պետական ծրագրերն ու օրենսդրական բարեփոխումները:

«Մեդիագրագիտություն»

Հաղորդումն ուղղված է ընդհանուր համացանցային գիտելիքների և մեդիագրագիտության բարձրացմանը: Սամվել Մարտիրոսյանը ներկայացնում է համացանցից օգտվելու հիմնական սկզբունքները, ինչպես նաև հանրությանը տեղեկացնում մեդիա վտանգների մասին:

«Մթնոլորտը Գագիկ Սուրենյանի հետ»

Հաղորդման հեղինակը մեկնաբանում է մթնոլորտային երևույթների առաջացման, երկրագնդի վրա դրանց տեղաբաշխման, հասարակության և տնտեսության վրա թողած հետևանքների առանձնահատկությունները: Մի շարք հաղորդումներ նվիրված են լինելու Հայաստանի կլիմայական

առանձնահատկություններին, նրա կլիմայական գոտիներին, մթնոլորտային երևույթներին, մթնոլորտի շրջանառության առանձնահատկություններին:

«Փաստ»

«Փաստ» հաղորդման նպատակն է նպաստել միջազգային հարաբերությունների և արտաքին քաղաքական գործընթացների վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի բարելավմանը: Դրա շրջանակում ներկայացվում են հնարավորինս սեղմ և կարևորություն ներկայացնող տեղեկություններ միջազգային կազմակերպությունների, կառույցների, ձևաչափերի, գործընթացների, ինչպես նաև միջազգային տարբեր եզրույթների վերաբերյալ:

«Ֆիլմ - Պահպանվող տարածքներ»

Ֆիլմաշար, որը ներկայացնում է Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներն ու անտառապահ-տեսուչների աշխատանքը: 5-7 րոպե տևողությամբ տեսաֆիլմերը պատմում են մեր երկրի եզակի կենսաբազմազանության պահպանության անհրաժեշտության և ԲՀՊՏ-ների արդյունավետ կառավարման մասին, ինչպես նաև ներկայացնում բնության պահապանների գործունեությունն ու կապը բնության հետ: Ֆիլմաշարը ստեղծվել է Կովկասի բնության հիմնադրամի կողմից:

Մշակութային

«Մշակութային լուրեր»

«Լուրերի» մշակութային հավելվածը ներկայացնում է մշակույթի ոլորտում իրականացվող պետական ծրագրերը, ինչպես նաև տվյալ ոլորտի օրենսդրական նախաձեռնությունները: Պատրաստվում են ռեպորտաժներ տարբեր արվեստագետների, նրանց ստեղծագործությունների, երկրում կատարվող մշակութային իրադարձությունների և խնդիրների, առաջարկվող լուծումների վերաբերյալ: Թողարկումը ներառում է Ազդագրի հատված, որը հեռուստադիտողին ներկայացնում է սպասվող հետաքրքիր համերգների, ներկայացումների և ցուցահանդեսների մասին տեղեկություններ:

«Խաղացանկ»

Անիմացիոն տեսանյութ, որտեղ ընդգրկված է ներկայացումների խաղացանկը: Նշվում են շաբաթվա ներկայացումները, դրանց ժանրերը, բեմադրիչները, գլխավոր դերակատարները:

«Բաց հարթակ»

Հարցազրույցի ձևաչափով «Բաց հարթակ» հաղորդման հյուրերը ներկայացնում են Հայաստանում և տարածաշրջանում տեղի ունեցող քաղաքական և մշակութային իրադարձությունների և նորությունների մեկնաբանությունները, պարզաբանումները, որոնք հնարավորություն են տալիս հեռուստադիտողին ավելի լավ պատկերացում կազմել պետական կառույցների նախաձեռնությունների, օրենքներում և կարգավորումներում փոփոխությունների, տնտեսության, սոցիալական, մշակութային ոլորտներում գործող ծրագրերի, նորամուծությունների մասին:

«Մեր ժամանակի հերոսը»

ՀՀ կառավարության կողմից տրամադրված ֆիլմաշարը պատմում է այն մարդկանց մասին, որոնք իրենց աշխատանքով քայլ առ քայլ կերտում են լավատեսության հաղթանակը Հայաստանի Հանրապետությունում:

«Չքաղաքականացնել»

Հաղորդումը հայտնի քաղաքական դեմքերին փորձում է բացահայտել ընտանեկան միջավայրում և ընկերական շրջապատում: Քաղաքական այրերն ու տիկնայք ներկայանում են «առանց փողկապի»:

«Հարցազրույցներ»

Կախված միջազգային ասպարեզում իրադարձությունների զարգացումից՝ հարցազրույցների համար ընտրվում են արտերկրի հայ կամ օտարերկրացի պաշտոնյաներ, փորձագետներ, համայնքի ներկայացուցիչներ: Հարցազրույցների շրջանակում անդրադարձ է կատարվում բուն իրադարձային թեմային, Հայաստանի և տվյալ երկրի հարաբերություններին, հայ համայնքների գործունեությանը, մշակութային կյանքին և այլն:

«Բաց երկնքի տակ»

«Բաց Երկնքի տակ» հաղորդաշարը ներկայացնում է Հայաստանի պատմամշակութային կոթողները, անդրադառնում հինավուրց կառույցներին՝ եկեղեցիներին, ամրոցներին, բացահայտում հազարամյակների պատմության հետաքրքիր շերտերը, որոնք բացվում են պեղումների ընթացքում, ևս մեկ անգամ կարևորում հայկական ճարտարապետության եզակի նմուշները, այն ամենը, ինչ եղել և կա բաց երկնքի տակ:

Մարզական

«Սպորտային լուրեր»

«Լուրերի» սպորտային հավելվածը ներկայացնում է Հայաստանի և աշխարհի սպորտային գլխավոր իրադարձությունները: Լուսաբանվում են ոլորտում առկա խնդիրները, օրենսդրական նախաձեռնությունները, մարզիկների հաջողությունները և սպորտի ոլորտում պետական քաղաքականությունը:

Հոլովակներ, այլ հաղորդումներ

«Հոլովակ»

Հոլովակները ներառում են սեփական և հայրենական արտադրության տեսանյութեր, հաղորդումների անոնսներ: Հոլովակների մաս են կազմում նաև ՀՀ Կառավարության, Առողջապահության նախարարության և այլ գերատեսչական մարմինների տրամադրած տեղեկատվական տեսանյութերը:

«Ուղիղ միացում»

ՀՀ Կառավարության և Ազգային ժողովի նիստերի, ՏԻՄ ընտրությունների, ՀՀ վարչապետի այցերը և երկրում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները ներկայացնող ուղիղ միացումներ:

ՆՈՐ ԱԼԻՔ

Հանրային հեռուստաընկերության «Նոր ալիք» թվային երիտասարդական առցանց հարթակը մեկնարկել է 2024 թվականի մարտի 1-ին: Առցանց հարթակի ստեղծման նպատակը առցանց հեռուստատեսային բովանդակության ստեղծումն է, ինչը հիմնականում ներառում է ժամանցային-զվարճալի հեռուստատեսային հաղորդումների պատրաստում և հասանելի տարբեր առցանց հարթակներում տեղադրում: 2025 թվականի ընթացքում «Նոր ալիք»-ն արդեն իսկ ունի զգալի քանակության առցանց հետևորդներ և դիտումների նշանակալի ծավալ, մասնավորապես «Նոր ալիքի» յութուբյան առցանց հարթակն ունեցել է մոտ 90 000 հետևորդներ և ավելի քան 45 մլն առցանց դիտում: Բացի այդ, ինստագրամյան առցանց հարթակն ունեցել է մոտ 17 000 հետևորդ և 90 մլն առցանց դիտումներ, ֆեյսբուքյան հարթակը՝ մոտ 44 000 հետևորդներ և 65 մլն առցանց դիտումներ, իսկ Տիկտոկ հարթակը՝ մոտ 15 000 հետևորդներ, 65 մլն դիտումներ և զգալի քանակի առցանց տարածումներ տարբեր օգտատերերի կողմից:

2025 թվականի մայիսին միացել է Նոր ալիքի յութուբյան էջի մոնիտիզացիան:

«Նոր ալիքի» հաղորդումներ

«Առաջին ակումբ 3-րդ եթերաշրջան»

Հումորային շոու հաղորդում, որտեղ ներկայացվում են հումորային սքետչեր և հոլովակներ: Հաղորդմանը ներկա են լինում նաև հայտնի հյուրեր: Հաղորդաշարը բեմականացված ներկայացման ձևաչափով է, որտեղ առկա է նաև հանդիսատես:

«Թիմակից»

Խաղ, որտեղ երկու բլոգեր հրավիրում են հայտնի հյուրերի միասին խաղալու ինտելեկտուալ, ճանաչողական և ժամանցային խաղեր:

«Կապի մեջ» (երկու եթերաշրջան)

Երիտասարդական փոդքաստ, որտեղ քննարկվում են երիտասարդներին հուզող հարցեր:

«From Shuka»

Վլոգ, որտեց վլոգերը հրավիրում է հայտնի հյուր և նրանք միասին բացահայտում են Երևանի հին շուկաներից մեկը: Մասնակիցները կատարում են էժան գնումներ և փորձում են լինել նորաձև:

«3 Ավելորդները»

Ժամադրության շոու, որտեղ մասնակիցները հաղորդավարների հետ միասին փորձում են ճանաչել միմյանց և խոսել հարաբերությունների մասին:

«Տուն Տանիք»

Սիթքոմ, որտեղ տարբեր աշխարհայացք ու ճաշակ ունեցող հերոսները անցնում են ճանապարհ իրար ընդունելու, ընկերանալու ու սիրելու համար:

ՀՀ Ազգային փոքրամասնությունների կյանքի և մշակույթի մասին հաղորդումներ

2025 թվականի ընթացքում արտադրվել և հեռարձակվել է «Էթնոգույներ» հաղորդաշարի թվով 25 հաղորդումներ: Հաղորդաշարը նվիրված է Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնություններին, նպատակ ունենալով ներկայացնել տարբեր ազգային համայնքների կյանքը, ավանդույթները, մշակութային առանձնահատկությունները, սովորույթները, կրոնը, լեզուն, խոհանոցը և այլն: Յուրաքանչյուր հաղորդում կրկնվել է 2 անգամ, կազմելով ընդհանուր 75 ցուցադրություն:

«Էթնոգույների» որոշ թողարկումներ, որոնք նվիրված են «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայով ճանաչված Հայաստանի ազգային փոքրամասնություններին, մասնավորապես՝ եզդիներին, քրդերին, ասորիներին և հույներին, թարգմանվել են տվյալ փոքրամասնության լեզվով և հասանելի են Հանրային հեռուստաընկերության Youtube-յան հարթակում:

Հայերեն ենթագրերով և ժեստերի լեզվով հաղորդումների հեռարձակում

Ապահովելով «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի պահանջը՝ Հանրային հեռուստաընկերության «Առաջին ալիքը» 2025 թվականին ամեն շաբաթ հեռարձակել է առնվազն մեկ օրիգինալ սոցիալական, մշակութային, ժամանցային և մանկական հաղորդում («Զանգակ-բամբակ», «Եղիր առողջ», «Հայաստանի մարդիկ», «Արկածների հետքերով» հաղորդաշարերը և մեկ հեռուստասերիալ շաբաթական 5 հեռարձակմամբ՝ ենթագրերով, «Փորձերոն» հաղորդաշարը՝ սուրդոթարգմանությամբ): Նախապես ծրագրավորված պաշտոնական ելույթներն ու ուղերձները, սոցիալական գովազդը, ինչպես նաև ամենօրյա «Լուրերի» թողարկումներից մեկը (ժ. 17:00) նույնպես հեռարձակվել է սուրդոթարգմանությամբ:

Գենդերային քաղաքականություն

Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման շրջանակներում 2025 թվականին Հանրային հեռուստաընկերության «Առաջին ալիքը» պատրաստել և հեռարձակել է հաղորդաշարեր, որոնք ուղղակիորեն կամ անուղղակի կերպով նպաստում են հասարակության շրջանում կնոջ դերի ու նշանակության արժևորմանը, գենդերային ապատեղեկատվության և տարածված կարծրատիպերի հաղթահարմանը, ներկայացնում են քաղաքականության մեջ, հանրային կառավարման ոլորտում, գործարար կյանքում, սպորտում և արվեստում կանանց հաջողությունները և հավասար հնարավորություններ ստեղծելու առավելությունը («Ծնողական ժողով», «Այլ ոճով», «Մեր ժամանակների հերոսը», «Չքաղաքականացնել», «5 րոպե արվեստ», «Առավոտ լուսո»):

2025 թվականին Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի, Միջազգային (արբանյակային) և Առաջինի լրատվական ալիքների հաղորդումները շարունակել են հեռարձակվել շուրջօրյա ռեժիմով:

Առաջին և Առաջինի լրատվական ալիքների հեռարձակումը ՀՀ տարածքում իրականացվել է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության միջոցով: Երևան քաղաքում իրականացվել է թվային հեռարձակում HD ձևաչափով, իսկ ՀՀ մարզերում իրականացվել է թվային հեռարձակում SD ձևաչափով: Առաջին ու Առաջինի լրատվական ալիքների հեռարձակումը ՀՀ տարածքում հասանելի են նաև տարբեր վերահեռարձակող ընկերությունների մալուխային կապուղիներով:

2025 թվականին Հանրային հեռուստաընկերության Միջազգային ալիքի հեռարձակումն արտերկրում ապահովվել է «Eutelsat» ընկերության կողմից բաց ազդանշանով՝ 13.0°E Hotbird-13G արբանյակի միջոցով, որի հեռարձակման ընդհանուր տիրույթը ներառել է ամբողջ Եվրոպան, Ասիայի հյուսիս-արևելքի մեծ մասը (Միջին Ասիա, Իրան, Ռուսաստանի հիմնական մաս՝ բացառությամբ հեռավոր արևելյան հատվածի), Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրները:

Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է նաև իր աշխատանքներն արտասահմանի հայկական մեծ համայնքներ ունեցող բնակավայրերում տեղի տարբեր վերահեռարձակող ընկերությունների մալուխային կապուղիների միջոցով Միջազգային ալիքը վերահեռարձակելու ուղղությամբ: Շարունակվել են աշխատանքները հեռուստաալիքի լսարանի ընդլայնման ուղղությամբ նաև ԱՊՀ երկրներում, հատկապես՝ Ռուսաստանում, Ուկրաինայում, ինչպես նաև Վրաստանում, ինչի արդյունքում աճել են Հանրային հեռուստաընկերության հաղորդումների հեռարձակման ծավալները:

Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք Ամերիկա հեռուստաալիքը՝ Սպեկտրում մալուխային ցանցի միջոցով, իսկ Առաջինի միջազգային հեռուստաալիքը՝ Verizon ընկերության միջոցով, ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի որոշ հատվածներում հասանելի են նաև վերգետնյա բաց, չկոդավորված կապուղիներով, ինչը հնարավորություն է տալիս այդ շրջաններում բնակվող ավելի քան կես միլիոն հայ բնակչությանն անվճար դիտելու Հանրային հեռուստաընկերության հաղորդումները:

Առցանց հեռարձակում

Հանրային հեռուստաընկերությունն, վերափոխելով իր առցանց հեռարձակումը, շարունակում է գործարկել 1TV Armenia հավելվածը, որը հասանելի է WEB, IOS, Android, Android TV, Roku և FireTV հարթակներում: Հավելվածը թույլ է տալիս ինտերնետային ցանցի հասանելիության պայմաններում ապահովել 4 ալիքի (Առաջին ալիք, Առաջինի լրատվական ալիք, Առաջինի միջազգային ալիք և Առաջին ալիք Ամերիկա) հեռարձակումը միաժամանակ ամբողջ աշխարհում: Հեռարձակումը իրականացվում է ինչպես իրական ժամանակում, այնպես էլ 24 ժամյա catch-up եղանակով: Հավելվածի մշակումը և ալիքների հեռարձակումը իրականացվում է այդ ասպարեզում մեծ փորձ ունեցող Tulix Inc. ամերիկյան կազմակերպության միջոցով:

Հանրային հեռուստաընկերությունն իր պաշտոնական www.1tv.am պաշտոնական կայքէջի միջոցով շարունակել է իրականացնել հեռարձակում իրական ժամանակում՝ հասանելի դարձնելով

հաղորդումների համաժամանակյա դիտումը ամբողջ աշխարհում: Առաջինի լրատվական ալիքի համաժամանակյա ինտերնետային հեռարձակումը նույնպես հասանելի է համացանցում՝ www.1lurer.am պաշտոնական կայքէջում:

2025 թվականին պահպանվել է Հանրային հեռուստաընկերության պաշտոնական կայքէջով և բջջային հավելվածով համաժամանակյա դիտումների և ընդհանուր դիտելիության մակարդակի կայուն աճը: Պաշտոնական կայքէջում հասանելի են եթերում հեռարձակված և արխիվացված բոլոր հաղորդումները՝ հեղինակային և հեռարձակման իրավունքների խիստ պաշտպանությամբ:

Հեռուստալսարանի չափումներ

2025 թվականին հեռուստատեսային չափումներով Առաջին ալիքը շարունակել է մնալ առաջատար դիրքերում և հիմնականում զբաղեցրել 2-րդ հորիզոնականը՝ մեծամասշտաբ հեռուստանախագծերի դեպքում հիմնականում զբաղեցնելով առաջատար դիրքը:

Միջազգային հարցումներով ևս Հանրային հեռուստաընկերությունը պահպանել է առաջատարի վարկանիշը՝ բարձր ցուցանիշով: Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI)՝ 2025 թվականին անցկացրած հարցման արդյունքներով՝ Առաջին ալիքը շարունակել է մնալ քաղաքականության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու ամենավստահելի լրատվամիջոցը:

Ստորև ներկայացված է համապատասխան գծապատկեր՝ 2025 թվականի հունիս ամսվա Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) անցկացրած հարցման “Public Opinion Survey: Residents of Armenia” հաշվետվությունից (https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia-february-2026/):



Հեռուստաընկերության յութուբյան թվով երկու ալիքները (ArmenianPublicTV և ArmpublicTVlurer) 2025 թվականին գեներացրել են շուրջ 35.1 մլն դրամի եկամուտ: 2025 թվականին շարունակում են գործարկվել Առաջին ալիք Ամերիկայի, Նոր ալիքի և Առաջինի միջազգային ալիքի յութուբյան հարթակները, ինչպես նաև ինստագրամյան և ֆեսբուքյան հարթակները: Ինչպես նաև գործարկվել է Առաջին ալիքի տիկտոկյան հարթակը, որի բաժանորդների թիվը հասել է շուրջ 38.000-ի:

2025 թվականին Առաջին ալիքի և Առաջինի լրատվական ալիքների սոցիալական ցանցերում շարունակվել է հետևորդների աճը, ընդ որում միայն Առաջին ալիքի յութուբյան ալիքի հետևորդների քանակն ավելացել է շուրջ 50 727-ով, իսկ Առաջինի լրատվական ալիքինը՝ շուրջ 43 896-ով:

2025 թվականին Առաջին ալիքի յութուբյան հարթակում տարեկան ընդհանուր դիտումները կազմել են մոտ 59.6 մլն., իսկ Առաջինի լրատվական ալիքի յութուբյան հարթակում՝ շուրջ 77.6 մլն.: Բացի այդ, 2025 թվականին Առաջին ալիքի առցանց էջերի (Facebook, Instagram) ընդհանուր տարեկան դիտումները կազմել է շուրջ 172 մլն., իսկ Առաջինի լրատվական ալիքի առցանց էջերի դիտումները կազմել են մոտ 854.7 մլն.:

ՄԵԴԻԱ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎ 2025 MEDIA SUMMIT

2025 թվականի հունիսին Հանրային հեռուստաընկերությունը կազմակերպեց և անցկացրեց Երևանում Եվրոպական հեռարձակողների Միության Մեդիա Գագաթնաժողովը, որը ներառում էր նաև հեռուստատեսային և թվային ասամբլեաները: Մեդիայի ավելի քան 100 մասնագետներ եվրոպական 30-ից ավելի երկրներից հավաքվել էին Երևանում՝ քննարկելու աշխարհում մեդիայի արդիական խնդիրները: Երկու հագեցած օրերի ընթացքում Եվրոպական հանրային հեռարձակողների ղեկավարներն ու լավագույն մասնագետները քննարկեցին թվային մեդիայի զարգացման ուղղությունները, լսարանի փոփոխվող կարիքները, արհեստական բանականության դերը և հանրային մեդիայի ապագան:

ՄԵԴԻԱ ԱԿԱԴԵՄԻԱ

2025 թվականին «Առաջին ալիքի» Մեդիա Ակադեմիան իրականացրել է երկու դասընթաց՝ «Արխիվի թվայնացում» և «Հեռուստատեսության տեխնիկական կառուցվածքը և աշխատանքը»՝ յուրաքանչյուրն երեք ամիս տևողությամբ:

Դասընթացների թիվն ընդլայնելու և ուսանողների համար նոր հնարավորություններ ստեղծելու նպատակավ Մեդիա Ակադեմիան առաջին անգամ համագործակցեց մասնավոր ընկերության հետ՝ վերջինիս կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում: TEAM «Տելեկոմ Արմենիա» ընկերության աջակցությամբ Եվրոպական հեռարձակողների միության ակադեմիայից և Ֆրանսիայի Արխիվի ինստիտուտից ձեռք բերվեցին թեմատիկ վարպետաց դասեր:

Երկու դասընթացներին մասնակցելու շուրջ 400 դիմողներից ընտրվեց 16 ուսանող, որոնցից 5-ն այժմ աշխատում են «Առաջին ալիքում»:

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հանրային հեռուստաընկերությունը 2025 թվականին իր գործունեությունն իրականացրել է ՀՀ պետական բյուջեից հեռուստատեսային ծառայությունների մատուցման դիմաց ստացված գումարի, առևտրային և սոցիալական գովազդից, մշակութային, ուսումնական, գիտակրթական և սպորտային հեռուստահաղորդումների ցուցադրման ընթացքում հովանավորչությունից, սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութերի վաճառքից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

Հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով «ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 22.05.2025թ. N 636 - Ն որոշմամբ 11002 «Ընդհանուր և լրատվական ուղղվածության հեռուստատեսային ծառայություններ» միջոցառմամբ Հանրային հեռուստաընկերությանը փաստացի հատկացվել է 6 579 116.4 հազ.դրամ, ներառյալ ավելացված արժեքի հարկի գումարը: «ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով 32004 «ՉԺՀ-ի հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի հանրային հեռուստաընկերության ենթակառուցվածքների ապահովում» միջոցառմամբ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կողմից նոր հեռուստատաղավարի կառուցման նախագծի իրականացման պայմանագրի շրջանակներում շինարարության հետ կապված ենթակառուցվածքների տրամադրման, նախապատրաստման ու կառուցման աշխատանքների մի մասի իրականացման նպատակով Հանրային հեռուստաընկերությանը հատկացվել է 434 355.8 հազ.դրամ, որից ծախսվել է 234 071.4 հազ.դրամ, իսկ մնացած գումարը՝ 200 284.4 հազ.դրամ, վերադարձվել է ՀՀ պետական բյուջե:

Բացի այդ, ՀՀ կառավարության 20.06.2025թ. N 811 – Ն որոշմամբ 32005 ««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ կապիտալ շինարարական աշխատանքների իրականացում» միջոցառմամբ նախատեսված 115 000.0 հազ.դրամի շրջանակներում Հանրային հեռուստաընկերությունը իրականացրել է ««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ–ի Խմբագրություն (ԱՍԲ-7) մասնաշենքի տանիքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում» դրմաշնորհային ծրագիրը, ու ծրագրով հատկացված 75 000.0 հազ.դրամից ծախսել է 63 964.0 հազ.դրամ, տնտեսել՝ 11 036.0 հազ.դրամ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի և վերջինիս կողմից հիմնադրված «Նորք գովազդային գործակալություն» ՍՊԸ–ի ու «Առաջին Ալիք Ամերիկա» փրոդաքշնի կողմից 2025 թվականին ներգրավված համախմբված եկամուտները՝ ըստ եկամուտների ստացման աղբյուրների:

Աղյուսակ 2

2025 թվականին Հանրային հեռուստաընկերության համախմբված եկամուտները՝ ըստ ստացման աղբյուրների

(հազ.դրամ)

Հ/Հ	Եկամտի տեսակ	Գումար
1	Հեռուստատեսային ծառայությունների մատուցումից ՀՀ պետական բյուջեից եկամուտ	5 474,598
2	Շնորհներից եկամուտ	258 572
3	Առևտրային եկամուտներ, այդ թվում՝	1 316 423
3.1	*Գովազդից և հովանավորչությունից եկամուտ*	*832 729*
3.2	*Ֆիլմերի և հաղորդումների պատրաստումից եկամուտ*	*414 570*
3.3	*Հեռարձակումից և վերահեռարձակումից եկամուտ*	*6 155*
3.4	*Այլ առևտրային եկամուտ*	*62 969*
4	Այլ եկամուտ	33 604
Ընդամենը		**7 083 197**

Աղյուսակ 2-ի **«Առևտրային եկամուտներ»** տողում ներառված են նաև «Նորք գովազդային գործակալություն» ՍՊԸ-ի կողմից ստացված առևտրային եկամուտները:

Աղյուսակ 2-ի **«Շնորհներից եկամուտ»** տողում ներառված են նախորդ տարիներին ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված կապիտալ դրամաշնորհների հաշվին ձեռք բերված հիմնական միջոցների, ինչպես նաև անհատույց ստացված ակտիվների գծով եկամուտները:

2025 թվականին Հանրային հեռուստաընկերությունը ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը:

Աղյուսակ 3-ում ներկայացված են «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի, «Նորք գովազդային գործակալություն» ՍՊԸ-ի և «Առաջին Ալիք Ամերիկա» փրոդաքշնի 2025 թվականի գործունեության ընթացքում կատարված համախմբված ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

Աղյուսակ 3

2025 թվականին Հանրային հեռուստաընկերության համախմբված ծախսերը՝ ըստ հիմնական ուղղությունների

(հազ.դրամ)

Հ/Հ	Ծախսային ուղղություններ	Գումար
1	Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ	3 034 369
2	Հեռուստահաղորդումների արտադրության, հեռուստահաղորդումների և ֆիլմերի հեռարձակման իրավունքի ձեռքբերման ծախսեր	2 045 054
3	Հեռարձակման ծախսեր	456 415
4	Մաշվածություն և ամորտիզացիա	927 046
5	Այլ ծախսեր	764 688
Ընդամենը		**7 227 572**

Աշխատավարձերի, հավելավճարների և այլ վարձատրությունների գծով ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 41.9%-ը և ներառել են ինչպես Հանրային հեռուստաընկերության հաստիքային

աշխատողների աշխատանքի վարձատրության, հավելավճարների ու պարգևատրման, մարզային և արտերկրի թղթակիցների վարձատրության, պայմանագրային հիմունքներով ներգրավված անձանց վարձատրության ծախսերը, այնպես էլ «Նորք գովազդային գործակալություն» ՍՊԸ-ի և «Առաջին Ալիք Ամերիկա» փրոդաքշնի հաստիքային աշխատողների և պայմանագրային հիմունքներով ներգրավված անձանց վարձատրության ծախսերը:

Հեռուստահաղորդումների արտադրության, հեռուստահաղորդումների և ֆիլմերի հեռարձակման իրավունքի ձեռքբերման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 28.3%-ը և ներառել են հեռուստահաղորդումների արտադրության և ձեռքբերման, հեռուստահաղորդումների, ֆիլմերի և տարբեր նշանակալի սպորտային ու մշակութային միջոցառումների հեռարձակման իրավունքների ձեռքբերման և հեռարձակման ծախսերը, հաղորդումների ստեղծագործական խմբերի և կրկնօրինակման ծառայությունների վարձատրության, տաղավարների ձևավորման դեկորացիաների ձեռքբերման և հաղորդումների արտադրության այլ ծախսերը:

Հեռարձակման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 6.3%-ը և ներառել են ՀՀ-ում թվային, արբանյակային, ԱՄՆ Կալիֆորնիա նահանգում մալուխային և առցանց ինտերնետային կապուղիներով հեռարձակման ծախսերը:

Մաշվածքի և ամորտիզացիայի գծով ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 12.8%-ը և ներառել են ինչպես Հանրային հեռուստաընկերության շենքերի և շինությունների, այլ հիմնական միջոցների մաշվածության և արտադրական նշանակության ծրագրային միջոցների ամորտիզացիայի ծախսերը, այնպես էլ «Նորք գովազդային գործակալություն» ՍՊԸ-ի հիմնական միջոցների մաշվածության գծով ծախսը:

Այլ ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 10.6%-ը և ներառել են գրասենյակային ապրանքների և նյութերի, արտադրական նյութերի և պահեստամասերի, լրատվության և այլ արտաքին տեղեկատվության, տնտեսական և ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման, տրանսպորտային միջոցների շահագործման, շենքերի և շինությունների պահպանման, կապի և կոմունալ ծառայությունների ձեռքբերման, ներկայացուցչական, գործուղման ծախսերը, հարկերը և տուրքերը (ներառյալ շահութահարկի գծով ծախսը և հետաձգված հարկերի գծով փոխհատուցումը), ինչպես նաև ֆինանսական զուտ ծախսը: Սույն ծախսային հոդվածը ներառում է նաև «Նորք գովազդային գործակալություն» ՍՊԸ-ի և «Առաջին Ալիք Ամերիկա» Փրոդաքշնի կողմից կատարված գովազդային, գործակալական և այլ ծախսերը:

2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված համախմբված **զուտ վնասը** կազմել է 144 375 հազ.դրամ:

2025 թվականի գործունեության ընթացքում Հանրային հեռուստաընկերությունը և «Նորք գովազդային գործակալություն» ՍՊԸ-ն **հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների** ձևով ՀՀ պետական բյուջե են վճարել 2 081 000 հազ.դրամ:

2025 թվականին Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է իրականացնել կապիտալ շինարարարության և տեխնիկական վերազինման աշխատանքներ:

2025 թվականի ընթացքում Հանրային հեռուստաընկերությունը Առաջին ու Առաջինի լրատվական ալիքների ընդհանուր կարիքների համար ձեռք է բերել 148 581 հազ.դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժողությամբ թվային հեռուստատեսային տեխնիկական սարքավորումներ, ծրագրային ապահովման համակարգեր, համակարգչային և սերվերային տեխնիկա, արտադրատնտեսական և գրասենյակային

գույք, տրանսպորտային միջոց և հայ-չինական համագործակցության շրջանակներում շինարարական հրապարակի անվտանգության ապահովման գծով գույք:

2025 թվականին իրականացված շինարարական աշխատանքների ընդհանուր գումարը կազմել է 333 027.6 հազ.դրամ, ներառյալ հարկերը, ինչը ներառել է Ընկերության կարիքների համար շինարարական աշխատանքները («Խմբագրություն» (ԱՍԲ-7) մասնաշենքի տանիքի կառուցման և վերանորոգման աշխատանքները, գլխավոր մասնաշենքը, «Երևան ստուդիա» և «Խմբագրություն» մասնաշենքերը սնող խմելու ջրի ջրագծերի վերակառուցման աշխատանքները, գլխավոր մասնաշենքի, ՇՀԿ մասնաշենքի, «Երևան ստուդիա» և «Խմբագրություն» մասնաշենքերի աշխատանքային տարածքների ու աշխատասենյակների ընթացիկ նորոգման աշխատանքները, գլխավոր մասնաշենքի վերելակի ձեռքբերման ու տեղակայման աշխատանքները՝ 97 756.6 հազ. դրամ ընդհանուր գումարով, ընդ որում «Խմբագրություն» (ԱՍԲ-7) մասնաշենքի տանիքի կառուցման և վերանորոգման աշխատանքների գծով 63,964.0 հազ.դրամն իրականացվել է ՀՀ պետական բյուջեից հատկացված կապիտալ դրամաշնորհի հաշվին: Բացի այդ, 2025 թվականին իրականացվել են նաև հայ-չինական համագործակցության շրջանակներում շինարարական աշխատանքները («ՇՀԿ-ի տնակ» մասնաշենքից և Դավիթ Բեկի փողոցից դեպի շինհրապարակ ճանապարհի կառուցման աշխատանքների մի մասը, «ՇՀԿ տնակ» մասնաշենքից և Դավիթ Բեկի փողոցից դեպի նոր հեռուստաստուդիայի մասնաշենք կոյուղատարի կառուցման աշխատանքների մի մասը, արտաքին գազամատակարարման գազատարի կառուցման աշխատանքների մի մասը, բարեկարգման աշխատանքների մի մասը, Դավիթ Բեկի փողոցից մինչև նոր հեռուստաստուդիայի մասնաշենք ջրագծի կառուցման աշխատանքների մի մասը, գործող պոմպակայանի ընթացիկ նորոգման և պոմպակայանից դեպի նոր հեռուստաստուդիայի մասնաշենք առանձին ջրագծի կառուցման աշխատանքների մի մասը, «Խմբագրություն» (ԱՍԲ-7) մասնաշենքի կաթսայատան վերանորոգման և դեպի նոր հեռուստաստուդիայի մասնաշենք ջերմատարի կառուցման աշխատանքների մի մասը, հեղեղատարերի կառուցման աշխատանքների մի մասը, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի ոռոգման ցանցի վերատեղադրման աշխատանքները, անտառատնկման աշխատանքների մի մասը, տեխնիկական կոմունիկացիաների (ինտերնետ, հեռախոսային կապ, տարածքի անվտանգություն) կառուցման աշխատանքների մի մասը, չինական կողմի աշխատուժի ժամանակավոր կացարանի տեղակայման նպատակով հողատարածքի վարձակալության ծախսերը, ժամանակավոր կացարանի խմելու ջրի ջրագծի և կոյուղատարի կառուցման աշխատանքները և ժամակավոր կացարանի ինտերնետային կապի մատակարարման ծախսեր)՝ 235 271.0 հազ.դրամ ընդհանուր գումարով, որից 234 071.4 հազ.դրամն իրականացվել է ՀՀ պետական բյուջեից հատկացված կապիտալ դրամաշնորհի հաշվին:

2025 թվականին «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ն կատարել է ռադիոհաղորդումների արտադրության ու հեռարձակման իր առաքելությունը՝ օրական հեռարձակելով հաղորդումներ հետևյալ ծավալներով. «Առաջին ծրագիր» լսողական ծրագիր, «Երկրորդ ծրագիր» լսողական ծրագիր («Իմ ռադիո»), Հոգևոր-մշակութային» լսողական ծրագիր («Ռադիո ՎԵՄ») 24-ական ժամ, «Հաղորդումներ այլ լեզուներով» ծրագիր՝ օրական 2 ժամ 30 րոպե, Հանրային ռադիո էյէմ լսողական ծրագիր՝ 24 ժամ, մայրաքաղաքային սփռման «Արևիկ» լսողական ծրագիր՝ 24 ժամ, Մշակութային առցանց լսողական ծրագիր՝ 24 ժամ:

Հանրային ռադիոընկերության նպատակը եղել և մնում է քաղաքական, տնտեսական, մշակութային և կենսականորեն կարևոր այլ ոլորտների վերաբերյալ անաչառ և պրոֆեսիոնալ բարձր մակարդակով և տեղեկատվական, կրթական, մշակութային, ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման միջոցով հանրության տեղեկացված լինելու իրավունքի ապահովումը:

ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հանրային ռադիոընկերությունը ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործընթացում առաջնորդվել է «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով, իր կանոնադրությամբ և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով: Հանրային ռադիոընկերության ռադիոալիքները, ինչպես նաև հեռարձակված հաղորդումների առանձին բաժինները և դրանց հեռարձակման ծավալները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 4

2025 թվականին Հանրային ռադիոընկերության ռադիոալիքների, ինչպես նաև հեռարձակված հաղորդումների ծավալները՝ ըստ լսողական ծրագրերի առանձին բաժինների

Հ/Հ	Լսողական ծրագրերի առանձին բաժիններ	Լսողական ծրագրերի առանձին բաժինների հեռարձակման ծավալ (ժամ)
1	**«Առաջին ծրագիր» լսողական ծրագիր**	**8 760.0**
1.1	Լրատվական, լրատվական-վերլուծական	1 230.7
1.2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	1 476.3
1.3	Մշակութային	2 196.6
1.4	Կրթական և հայոց լեզվի	454.1

Հ/Հ	Լսողական ծրագրերի առանձին բաժիններ	Լսողական ծրագրերի առանձին բաժինների հեռարձակման ծավալ (ժամ)
1.5	Ժամանցային	398.7
1.6	Երաժշտական	2 044.2
1.7	Առողջապահական	260.0
1.8	Գիտական	110.9
1.9	Այլ	588.5
2	**«Երկրորդ ծրագիր» («Իմ ռադիո») լսողական ծրագիր**	**8 760.0**
2.1	Ժամանցային	277.9
2.2	Կրթական և հայոց լեզվի	895.2
2.3	Լրատվական, լրատվական-վերլուծական	234.2
2.4	Քաղաքական, տնտեսական, հասարակական	195.3
2.5	Մշակութային	482.4
2.6	Երաժշտական	6 332.3
2.7	Այլ	342.7
3	**«Արևիկ» («Երրորդ ծրագիր») լսողական ծրագիր**	**8 760.0**
3.1	Լրատվական	219.4
3.2	Կրթական և հայոց լեզվի	1 417.7
3.3	Տեղեկատվական	894.2
3.4	Մշակութային	817.1
3.5	մարզական	191.3
3.6	Երաժշտական	4 232.0
3.7	ժամանցային	711.9
3.8	Այլ	276.4
4	**Հանրային ռադիո էյէմ լսողական ծրագիր**	**8 760.0**
4.1	Լրատվական, լրատվական-վերլուծական	1 090.1
4.2	Քաղաքական, տնտեսական, հասարակական, *այդ թվում*	2 308.3
4.2.1	*Ազգային փոքրամասնությունների լեզուներով (քրդերեն, եզդիերեն, ասորերեն, հունարեն) օտարալեզու հաղորդումներ*	730.0
4.3	Մշակութային	1 945.7
4.4	Կրթական և հայոց լեզվի	402.2
4.5	Ժամանցային	353.2
4.6	Երաժշտական	1 810.7
4.7	Առողջապահական	230.3
4.8	Գիտական	98.2
4.9	Այլ	521.3
5	**«Հոգևոր-Մշակութային» լսողական ծրագիր**	**8 760.0**
5.1	Հոգևոր-կրթական	637.5
5.2	Մշակութային	1 144.1

Հ/Հ	Լսողական ծրագրերի առանձին բաժիններ	Լսողական ծրագրերի առանձին բաժինների հեռարձակման ծավալ (ժամ)
5.3	Երաժշտական	6 918.1
5.4	Մանկական	60.3
6	**«Մշակույթ» լսողական ծրագիր (առցանց)**	**8 760.0**
6.1	Մշակութային	8 760.0
7	**«Հաղորդումներ այլ լեզուներով» (առցանց) լսողական ծրագիր**	**638.8**
7.1	Քաղաքական, տնտեսական, հասարակական	638.8

Հանրային ռադիոընկերության կողմից «Առաջին ծրագիր» ռադիոալիքով հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալների տեսակարար կշիռները՝ ըստ առանձին բաժինների, ներկայացված են Գծապատկեր 5-ում:

Գծապատկեր 5. 2025 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից «Առաջին ծրագիր» ռադիոալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (%)



Հանրային ռադիոընկերությունը 2025 թվականին պատրաստել և հեռարձակել է բազմաժանր հաղորդումներ սոցիալ-ժողովրդագրական բոլոր խմբերի ռադիոունկնդիրների համար: Հանրային կարևորության գրեթե բոլոր հարցերը մեկնաբանվել և քննարկվել են ռադիոեթերում: Լուսաբանվել են հասարակական կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող առավել ուշագրավ իրադարձությունները: Քաղաքական, տնտեսական, տարածաշրջանային և միջազգային իրադարձությունները վերլուծվել և բազմակողմանիորեն լուսաբանվել են տարբեր հաղորդումների շրջանակում: Հաղորդումների և ռեպորտաժների միջոցով վերհանվել են բազմաթիվ սոցիալական թեմաներ: Առավել ուշադրություն է հատկացվել գենդերային հիմնախնդրին, կանանց իրավունքների պաշտպանությանը և իրավահավասարությանը, հասարակությունում, քաղաքական ասպարեզում, բիզնեսում կանանց դերի

ամրապնդմանը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել երեխաների իրավունքների պաշտպանությանը: Հանրային ռադիոն լուսաբանել է խոցելի խմբերին առնչվող հարցերը, հաղորդումներ են պպատրաստվել հաշմանդամների կյանքի և խնդիրների մասին: Գենդերային հիմնահարցերի, հասարակության ընկալումների փոփոխման և կարծրատիպերի վերացման հարցում, ինչպես նաև ընտանեկան բռնության և բուլինգի կանխարգելմանն ուղղված, հաղորդումների համար որպես հարթակ են ծառայել Առաջին ծրագրի «Քո ձայնը», «Ես առողջ եմ», «Դպրություն» հաղորդաշարերի, ինչպես նաև «Երկրորդ ծրագիր» լսողական ծրագրի «Խոշոր պլան», «Հարցրու Վեգային», «Սեր կա», «Հայուհի», «Բուն ԹՎ-ն ներկայացնում է», հաղորդաշարերի բազմաթիվ թողարկումներ:

Հաղորդաշարերում հատուկ ուշադրություն է դարձվել գիտության, էկոլոգիայի հիմնահարցերին, եղել են բազմաթիվ հաղորդումներ, որոնք լայնորեն լուսաբանել են Հայաստանում կրթական, գիտական, մշակութային լայնածավալ միջոցառումները, տարեդարձային համապետական մեծ իրադարձությունները, փառատոնները և գիտաժողովները:

Հայաստանից դուրս գտնվող անգլալեզու հասարակության և քաղաքական շրջանակների համար նախատեսված «Երևանի ձայնը» (Voice of Yerevan) անգլալեզու առցանց հաղորդաշարը, որը ներկայացնում է պաշտոնական Հայաստանի տեսակետները միջազգային հրատապ խնդիրների, մասնավորապես, հայ-ադրբեջանական խաղաղության գործընթացի և տարածաշրջանային զարգացումների մասին՝ 2025 թվականին թարգմանվում է հայերեն և հեռարձակվում է նաև հայալեզու լսարանի համար:

Վիզուալացման ուղին ընտրած Հանրային ռադիոն վերը նշված բոլոր թեմաները լուսաբանել է նաև վիդեոհաղորդումներով: Այսօրվա դրությամբ Հանրային ռադիոն իր Ֆեյսբուքի և Յութուբի ալիքներով և սեփական սթրիմով (տեսահեռարձակմամբ) օգտատերին ներկայացնում է շաբաթական ընդհանուր տևողությամբ մոտ 16.5 ժամ օրիգինալ վիդեո արտադրանք՝ ռեպորտաժներ և հարցազրույցներ: Դրան պետք է ավելացնել նաև օրական 20-30 րոպե լրատվական ժանրի տեսայնացված հաղորդումները, ինչի արդյունքում վիդեոարտադրանքի շաբաթական ընդհանուր ծավալը հասնում է մոտ 18 ժամի: Երբ Հանրային ռադիոընկերությունում սկսեն աշխատել նոր տաղավարները՝ վիզուալացումն էապես կավելանա:

Հանրային ռադիոընկերության կազմում գործում են չորս երաժշտական կոլեկտիվներ. Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների վաստակավոր անսամբլը, «Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր անսամբլը, էստրադային սիմֆոնիկ նվագախումբը և «Արևիկ» մանկապատանեկան համույթը:

«ԱՌԱՋԻՆ ԾՐԱԳԻՐ» ԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Լրատվական, լրատվական-վերլուծական հաղորդումներ

«Ռադիոլուր» լրատվական-վերլուծականը համակողմանի լուսաբանում է Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները: 2025 թվականի ընթացքում «Ռադիոլուր»-ը հեռարձակվել է երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան ժամը 8:00-ից մինչև 09:30-ը «Առավոտյան լրատվական ալիք» ձևաչափի շրջանակներում, ժամը 10:00-ի թողարկում՝ «Սուրճ ու սեր առավոտից» հաղորդաշարի

շրջանակում՝ 5 րոպե տևողությամբ, այնուհետև 10 րոպե տևողությամբ թողարկումներ են հեռարձակվել ժամը 12:00-ին, 13:00-ին, 14:00-ին, 16:00-ին, ինչպես նաև 15 րոպե տևողությամբ թողարկումներ՝ ժամը 15:00-ին, 17:00-ին և 20:00-ին, իսկ գլխավոր թողարկումը, 56 րոպե տևողությամբ, հեռարձակվում է ժամը 18:00-ին: Շաբաթ օրերին հեռարձակվում է օրական 9 թողարկում՝ 10 և 15 րոպե տևողությամբ, իսկ գլխավոր թողարկումը ժամը 18:00-ին՝ 40 րոպե տևողությամբ: Ավելացել են «Ռադիոլուրի» կիրակի օրերի 5 րոպեանոց թողարկումները ժամը 11:00-ին, 13:00-ին, 15:00-ին, 17:00-ին և 18:00-ին: Այս առումով Հանրային ռադիոն դարձել է Հայաստանում գործող այն քիչ հեռարձակող ԶԼՄ-ներից մեկը, եթե ոչ միակը, որը կիրակի օրերին լուրերի թողարկում է պատրաստում: Աշխատանքային օրերին ժամը 14:00-ի թողարկումը ներկայացվում է արևմտահայերեն:

Աշխատանքային օրերին ժամը 21:00-ին ազգային փոքրամասնություններին մատուցվող մեդիածառայությունների շրջանակում ռուսալեզու լսարանի համար հեռարձակվում է լրատվական-վերլուծական հաղորդում՝ 15 րոպե տևողությամբ:

«Ռադիոլուր»-ի շրջանակում ներկայացվում են մարզաշխարհի ամենակարևոր և հետաքրքիր իրադարձությունները, հայկական սպորտի զարգացման ընթացքը և առկա խնդիրները:

Լրահոսը հայերեն, ռուսերեն, անգլերեն, ադրբեջաներեն, թուրքերեն, վրացերեն, հունարեն, քրդերեն, եզդիերեն, ասորերեն, արաբերեն և պարսկերեն հասանելի է www.armradio.am կայքէջում:

«Առավոտյան լրատվական ալիք»-ը լրատվական-վերլուծական ամենօրյա շարք է, որն իր ունկնդիրներին առաջարկում է կարճ լրատվական թողարկումներ, թեմատիկ ենթաբաժիններ («Տնտեսություն», «Գիտություն», «Մշակույթ» և այլն) այդ թողարկումների միջև:

Քաղաքական, տնտեսական, հասարակական հաղորդումներ

«Կիրակի». անդրադարձ անցնող շաբաթվա՝ Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքական, անվտանգային, տնտեսական, իրավական ու միջազգային իրադարձություններին:

«Խաչմերուկ» հաղորդաշարն անդրադառնում է անցած շաբաթվա ընթացքում Հայաստանի հարևան չորս երկրներում տեղի ունեցած ներքին ու արտաքին քաղաքական, անվտանգային, տնտեսական իրադարձություններին, որոնք առնչվում են Հայաստանին:

«Առանց տողատակի» հաղորդաշարը շաբաթվա հինգ աշխատանքային օրերին անդրադառնում է ամենաուշագրավ իրադարձություններին ինչպես Հայաստանում, այնպես էլ տարածաշրջանում:

«Երևանի ձայնը». զրույցներ հայաստանցի և օտարերկրացի բարձրաստիճան պաշտոնատար անձանց, դեսպանների և վերլուծաբանների հետ արտաքին քաղաքականության շուրջ:

«Հանրամեդիա» շարքի հեղինակը հայաստանյան լրատվամիջոցների ներկայացուցիչների և սյունակագիրների հետ քննարկում է հանրային կարևորություն և հնչեղություն ունեցող թեմաները և ԶԼՄ-ներում դրանց լուսաբանմանն առնչվող հարցերը:

«Սպորտքաստ» հաղորդաշարը մարզաշխարհում տեղի ունեցող իրադաձությունների, մրցաշարերի, հայ մարզիկների մրցելույթների մասին է:

«Դիվանագիտական գործ» հաղորդաշարը նվիրված է Հայաստանի Երրորդ Հանրապետության դիվանագիտության պատմությանը:

«Ձեր փաստաբանը» հաղորդաշարի առաքելությունն է օրենսդրական, իրավական դաշտի փոփոխություններն ունկնդիրների համար առավել հասկանալի դարձնելը:

«**Քո ձայնը**» անդրադառնում է սոցիալական, սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային թեմատիկային:

«Եռաչափ տարածաշրջան» հաղորդման դիտարկման նյութը եղել է տարածաշրջանային իրադարձություններն ու դրանց ազդեցությունը մեր երկրի վրա:

«Երկրորդ շնչառություն» հաղորդաշարը նվիրված է տարեց մարդկանց կյանքի որակի խնդիրներին՝ առողջությանը, ժամանցին, սոցիալական ներգրավվածությանը:

«Հայագիտակ» հաղորդաշարն անդրադառնում է հայագիտական ուսումնասիրություններին, գիտական և մշակութային կենտրոններին, պատմության մեջ հետք թողած և ներկայում թողնող մարդկանց:

«Հետահայաց» հաղորդաշարը անդրադարձել է պատմական իրադարձությունների, որոնք տեղի են ունեցել առավելապես վերջին 100-150 տարվա ընթացքում:

«Ապրելու բանաձև» հաղորդաշարը ակնարկների շարք էր՝ նվիրված Հայրենիքի պաշտպանության համար մղված մարտերի մասնակիցներին՝ ազատամարտիկներին, զինծառայողներին և կամավորներին:

«Էկոսֆերա» հաղորդաշարը նվիրված է բնապահպանական խնդիրներին:

«Սփյուռքի ձայնը» հաղորդաշարը ներկայացնում է լուրեր Սփյուռքից, զրույցներ համայնքային կյանքի շուրջ՝ գաղթօջախների կարևոր դերակատարների հետ:

«Բիզնես բանաձև» հաղորդումը նվիրված է հայկական և համաշխարհային տնտեսության զարգացումներին:

Մշակութային հաղորդումներ

«Գրեթե 100 տարի» հաղորդման ընթացքում ներկայացվում է Հանրային ռադիոյի «Ոսկե ֆոնդը»՝ հատվածներ արխիվում պահպանվող ձայնագրություններից, դրանց ստեղծման հետ կապված ուշագրավ մանրամասներ:

«Սաունդչեք»-ով հեռարձակվում են հարցազրույցների երաժշտական աշխարհի ներկայացուցիչների հետ:

«Մշակույթը՝ հեղափոխություն» ճանաչողական շարքը պատմում է 20–րդ դարի երկրորդ կեսի և դարավերջի մոդեռնիստական, ազատական, նորարարական գաղափարների առաջացման ու տարածման պատմությունը:

«Օրացույցից դուրս» հաղորդաշարի առանցքում հիշարժան տարեթվերն են, իրադարձությունները, անհատները:

«Նոտայից՝ ստուդիա» հաղորդաշարը Հայաստանի հանրային ռադիոյի երաժշտական ստուդիայում ձայնագրված երգերի պատմության մասին է:

«Արմատներ» հաղորդաշարի ընթացքում անդրադարձ է կատարվում հայկական ազգագրական երաժշտությանը, ավանդույթներին, ծիսակարգին:

«Վերնատուն» հաղորդաշարով Հանրային ռադիոընկերությունն անդրադառնում է մշակութային անցուդարձին՝ այդ ոլորտի կարևոր դերակատարների մասնակցությամբ:

«**Հայրենադարձի արկածները**» շարքը պատմում է Հայաստան տեղափոխված սփյուռքահայերի և նրանց հետ պատահած ուշագրավ, երբեմն էլ զվարճալի դրվագների, Սփյուռքի և Հայաստանի մշակութային, լեզվական, կենցաղային տարբերությունների և առանձնահատկությունների մասին:

«Կենդանի ձայնադարան»-ով Հանրային ռադիոյի երաժշտախմբերը ներկայացնում են թեմատիկ համերգային ծրագրեր:

«Պոեզիա» հաղորդման ընթացքում անվանի ասմունքող Սիլվա Յուզբաշյանն ընթերցում է հատվածներ համաշխարհային և հայկական պոեզիայից:

«15 րոպեն քիչ է» շարքը նվիրված է երկրի մշակութային և հասարակական կյանքում հետք թողած մարդկանց:

«Ասացողը» հաղորդաշարի հիմքում բանասացն էր ու իր պատմությունը:

«Բարձր գրականություն» հաղորդման ընթացքում հեղինակը և հյուրը քննարկում են մեկ գիրք, փոխանակում կարծիքներ այդ ստեղծագործության վերաբերյալ:

«Ռադիոթատրոն»-ը ներկայացնում է տարբեր ժամանակաշրջաններում ՀՌ-ում ձայնագրված և ֆոնդավորված ռադիոբեմականացումները:

«Գերդաստաններ» հաղորդաշարը մեծ ռեպորտաժների շարք էր՝ նվիրված այն ընտանիքներին, որոնց առնվազն երեք սերունդներ պահպանում են միևնույն /կամ հարակից/ մասնագիտության ավանդույթները:

«Իմ երգը» հաղորդումը նվիրված է հայկական ազգագրական երաժշտությանը:

«**Դասական երաժշտությունը և մենք**» հաղորդումը նվիրված է դասական երաժշտությանը:

«Մ-զոն» հաղորդումը անդրադառնում է ջազ, սոուլ, ռոք և ռոքնռոլ երաժշտական ոճերին, ներկայացվում են ոլորտի նորությունները և պատմական ակնարկներ կատարողների ու հիթերի մասին:

«Երաժշտական առավոտ» հաղորդման ընթացքում երաժիշտները կենդանի կատարմամբ ներկայացնում են իրենց ստեղծագործությունները:

«Երաժշտական եռանկյունի» շարքով հեռարձակվում են զրույցներ երաժշտության և մշակույթի շուրջ: Հաղորդման մասնակիցները երաժիշտներ են, արվեստագետներ և մշակույթի գործիչներ:

Կրթական և հայոց լեզվի հաղորդումներ

«Մասնագիտություն» հաղորդման ընթացքում ներկայացվում է որևէ մասնագիտություն, որի նրբությունների և առանձնահատկությունների մասին պատմում են տվյալ ոլորտի ներկայացուցիչները:

«Դպրություն» հաղորդումն անդրադառնում է հանրակրթության խնդիրներին և դպրոցի առօրյային:

«Մենք և մեր բառերը» հաղորդումը նվիրված է հայերենին: Անդրադառնում է առարկայի բոլոր կողմերին՝ բառակազմությունից ընդհուպ ոճաբանություն: Ներկայացնում է լեզվի զարգացման պատմական ընթացքը և արդի ձևերը: Երբեմն անդրադառնում է հայ գրականությանը: Մատնանշվում են հանրային կյանքում և մամուլում տեղ գտնող լեզվական վրիպակները:

«Խոսենք հայերեն» հաղորդումը անդրադառնում է հաճախակի կրկնվող լեզվական սխալներին, մանրամասնորեն վերլուծում այդ սխալները և առաջարկում ճիշտ տարբերակների կիրառությունը:

Ժամանցային հաղորդումներ

«Սուրճ ու սեր առավոտից»-ը տեղեկատվական, ժամանցային, ինտերակտիվ հաղորդաշար է, որը ներառում է նաև իրադարձային թեմաների շուրջ զրույցներ:

Երաժշտական հաղորդումներ

Եթերում հնչող երաժշտությունը ներկայացվում է համակարգված թեմատիկ, խմբային, օրացուցային դասակարգմամբ, համերգային կարճ բաժիններով: Ներկայացվում են լայն տարածում ունեցող երաժշտական ժանրերը՝ դասական, ազգային, ժողովրդական, էստրադային, ջազ, և այլն: Հեռարձակվել են Հանրային ռադիոյի երաժշտախմբերի համերգները. Հովհաննես Բադալյանի ծննդյան 100-ամյակին նվիրված համերգը, «Արևիկ» մանկապատանեկան անսամբլի և էստրադային-սիմֆոնիկ նվագախմբի համատեղ համերգը՝ նվիրված Երեխաների պաշտպանության միջազգային օրվան, Ալեքսանդր Աճեմյանի ծննդյան 100-ամյակին նվիրված համերգը, «Զարուհի Բաբայանի և բենդի» ձայնասկավառակի շնորհանդեսի համերգը: Հեռարձակվել են «**Եվրատեսիլ**» և «**Մանկական Եվրատեսիլ**» երգի մրցույթները:

Առողջապահական հաղորդումներ

«**Ես առողջ եմ**». ժանրը՝ հարցազրույց: Հաղորդումն անդրադառնում է առողջության հետ կապված զանազան խնդիրներին: Հյուրերը՝ բժշկագիտության ոլորտի մասնագետներ են և գիտնականներ:

Գիտական հաղորդումներ

«**Մտքի ուժը**» հաղորդաշարը մեծ ռեպորտաժների շարք է՝ նվիրված հայկական գիտությանը, գիտահետազոտական հաստատությունների աշխատանքներին, վերջին հայտնագործություններին և նորամուծություններին:

«Հարց ու գիտափորձ» հաղորդաշարը ներկայացնում է գիտական հայացք սովորական և կենցաղային թվացող թեմաներին:

Այլ գերատեսչությունների հաղորդումներ

2025 թվականին հեռարձակվել է ՀՀ Ոստիկանության **«Ռադիո 02»** ամենշաբաթյա շարքը:

Շարունակվել են հեռարձակվել Հայ Առաքելական եկեղեցու հաղորդումները՝ **«Ինքնություն», «Ավետիս», «Մանանա»:** Հեռարձակվել են **Սուրբ ծննդյան** և **Հարության տոնի** պատարագները:

2025 թվականի ընթացքում ուղիղ միացմամբ հեռարձակվել են **ՀՀ Կառավարության նիստերը** և **ՀՀ վարչապետի հանդիպումները** լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ:

«ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» («ԻՄ ՌԱԴԻՈ») ԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Հանրային ռադիոընկերության «Երկրորդ ծրագիր» ռադիոալիքը («Իմ ռադիո»-ն) մատուցում է բազմաժանր ու բազմաոճ երաժշտական, ժամանցային, կրթական, ճանաչողական և հասարակական բնույթի հաղորդաշարեր երիտասարդների համար: Եթերում ներկայացվում են հայ և օտարազգի կատարողների լավագույն ստեղծագործությունները, լուսաբանվում է երիտասարդների գործունեությունը տարբեր ոլորտներում, ներկայացվում է լրատվություն:

Լրատվական, լրատվական-վերլուծական

«Իմ ռադիոլուր». ներկայացնում է կարճ լրատվություն:

«Իմ ռադիոյով» վերահեռարձակում են «Առաջին ծրագրի» **«Ռադիոլուր»** լրատվական ծառայության թողարկումները:

«Մի բան պատմեմ». նորություններ ֆիլմերի, երաժշտության, նորարարության ու համացանցում քննարկվող այլ թեմաների մասին:

Կրթական և հայոց լեզվի հաղորդումներ

«Խոշոր պլան» հաղորդաշարով ներկայացվում են քննարկումներ սոցիալական, քաղաքական հասարակական այն թեմաների շուրջ, որոնք ունեն կրթական բաղադրիչ:

«Գիտության շուրջ» հաղորդաշարը ներկայացնում է գիտական տարբեր հասկացությունների բացատրությունը պարզ լեզվով:

«Դրամապանակ» հաղորդաշարը ֆինանսական գրագիտության մասին է:

«Խոսենք հայերեն» հաղորդման ընթացքում քննարկվում են խոսակցական հայերենում տեղ գտած ոճաբանական սխալները և հիմնավորումներով ներկայացվում ճիշտ տարբերակները:

«ԲՈՒՆ ԹՎ-ն ներկայացնում է» հաղորդաշարը ներառում է հաղորդումներ լեզվի և հաղորդակցության, սոցիոլոգիայի, հոգեբանության, քաղաքագիտության, տնտեսագիտության և պոեզիայի մասին:

«Ինչ է, ով է» հաղորդաշարը համառոտ պարզաբանում է նոր տերմինները, երևույթները, որոնք արագ տարածում են գտել, սակայն ոչ բոլորի համար են հասկանալի:

«Գրքի ակումբ» շարքը միավորել է գրողներին, հրատարակիչներին, ընթերցասերներին, որոնք ներկայացնում են նոր գիրք և ակումբի շրջանակում ծանոթանում ու քննարկում այն:

«IT շաբաթ» հաղորդաշարը ներկայացնում է լուրեր տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտից:

Քաղաքական, տնտեսական, հասարակական հաղորդումներ

«Մարզական լեգենդի հետքը» հաղորդաշարը ճանաչված մարզիկի տպավորիչ նվաճումների, նրա մասին մոտիվացիոն պատմությունների, պատմական դրվագների մասին է:

«Ժամանակի մեքենա» շարքը համաշխարհային պատմության տարբեր տասնամյակների ընթացքում տեղի ունեցած հայտնի և անհայտ իրադարձությունների, անհատների մասին է՝ ժամանակում ճանապարհորդող երիտասարդ աղջկա ընկալմամբ:

«Հայուհի» հաղորդաշարը ներկայացնում է հայ կանանց հետքն աշխարհում՝ կարճ ակնարկներով:

«Ես լսում եմ քեզ»-ը շարք է, որով հոգեբանները, սոցիալական աշխատողները և այլ մասնագետներ զրուցում են հանրությանը հուզող խնդիրների մասին:

«Երևանյան փողքասթ» հաղորդումը պատմում է քաղաքի վարչական շրջանների, դրանց ամենաթաքուն անկյունների, մարդկանց ու սովորույթների մասին:

Մշակութային հաղորդումներ

«Գրադարակ»-ը զրույց է ընթերցասեր հյուրի հետ սիրելի գրքի և դրա թողած ազդեցության մասին:

«Ռադիոպատում» շարքում «Իմ ռադիոյի» հեղինակ-հաղորդավարները ընթերցում են հայ և արտասահմանյան գրականության լավագույն նմուշները:

«Առավոտը թանգարանում» հաղորդաշարն անդրադառնում է արվեստի մի կոնկրետ ստեղծագործությանը, դրա պատմությանը, թողարկումը ներառում է նաև զրույց մասնագետի հետ:

«ԹատրՕՆ» հաղորդաշարը պատմում է թատերական ներկայացումների մասին՝ անդրադառնալով նաև ներքին խոհանոցին:

«**Արթ ուրբաթ**» հաղորդաշարը պատմում է շաբաթվա մշակութային իրադարձությունների, սպասվող պրիեմերիաների մասին:

«ՌադիոթատրՕՆ» հաղորդաշարն անդրադառնում է ռադիոներկայացման բեմադրման ընթացքին:

«Հին ջահելություն» շարքը ներկայացնում է տարբեր ժամանակաշրջաններում ապրող «հին ջահելության» կյանքը՝ հետաքրքրությունները, մտքերն ու գաղափարները:

«Գնա՞նք կինո» շարքի հեղինակներն ամեն էպիզոդում ներկայացնում են որևէ ֆիլմ, նրանցից մեկը հավանում է ֆիլմը, մյուսը՝ ոչ, նրանք փորձում են փաստերով ամրապնդել իրենց տեսակետները:

«Հայեցի» հաղորդաշարը ներկայացնում է հայկական ավանդական ծեսերը, դրանց պատմությունները, խորհուրդն ու զուգահեռներ տանում ժամանակակից տոների և դրանք նշելու նոր մշակույթի հետ:

Երաժշտական հաղորդումներ

«Երազողները» շարքը ներկայացնում է Հայաստանում տարբեր ժանրերի երաժշտություն ստեղծողներին, պատմում, թե ինչի մասին են ստեղծագործում:

«**Երգխոսություն**» հաղորդաշարը վերլուծում է այն երևույթը, որ մարդիկ կարող են լսել նույն երաժշտությունը, սակայն միանգամայն տարբեր ձևով դա ընկալել:

«**Բիթրեյթ**» հաղորդումը պատմում է համաշխարհային աստղերի թողարկած նոր ձայնասկավառակների մասին:

«**Էպիկա**» հաղորդաշարի ընթացքում ներկայացվում է լեգենդար կատարողների ստեղծագործական ճանապարհն ու երգերի պատմությունը:

«Մի երգ պատմիր» շարքի ամեն էպիզոդում որևէ երիտասարդ արտիստ ներկայացնում է իր ամենահայտնի երգն ու խոսում է դրա ստեղծման պատմության մասին:

Ժամանցային հաղորդումներ

«**Սեր կա**» հաղորդաշարը պատմում է մարդկանց մասին, որոնք միմյանց հետ կյանքի ճանապարհ են անցնում:

«**Ռադիոերեկո**» հաղորդաշարը որևէ թեմայի մասին զրույց է հյուրի հետ՝ համեմված երաժշտությամբ:

«**Շատ տաք թեյ**» հաղորդաշարում ներկայացվում են համաշխարհային շոու բիզնեսի պատմության ամենաաղմկահարույց դեպքերը, ամենաքննարկված մարդիկ ու չբացահայտված պատմությունները:

«**Հարցրու Վեգային**». հաղորդավարը պատասխանում է առցանց տրված հարցերին՝ սկսած անձնական հարաբերություններից, մինչեւ մասնագիտական կողմնորոշման կամ աշխատավայրում դժվարությունների մասին:

«**Կար-չկար**»-ը զրույցների շարք է, որտեղ տարբեր մասնագիտության մարդիկ պատմում են իրենց հետաքրքրությունների, մտքերի, դժվարությունների, իրենց հուզող հարցերի մասին:

«**2 տանդեմ**» ծրագրի 4 հաղորդավար՝ 2 կին և 2 տղամարդ, քննարկում են երիտասարդներին առնչվող ու հասարակական հետաքրքրություն առաջացնող թեմաներ՝ առցանց ծանոթություններից մինչև կրթական համակարգի խնդիրներ:

«ԱՐԵՎԻԿ» («ԵՐՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ») ԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Լրատվական, լրատվական-վերլուծական

«Լուրեր ընտանիքի համար». օրվա տարբեր ժամերին ներկայացվում է կարճ լրատվություն:

«Զարթուցիչ» հաղորդումը դպրոցականների համար է, ներկայացվում են ռեպորտաժներ կրթօջախներից, մանկական ստեղծագործական կենտրոններից, մարզադպրոցներից:

Կրթական և հայոց լեզվի հաղորդումներ

«Էկոակումբ» հաղորդաշարը պատմում է, թե ինչպես են երեխաները մասնակցում էկոլոգիական հիմնախնդիրների լուծմանը, ինչ հարցեր են բարձրացնում: Հաղորդումը պարբերաբար անդրադառնում է էկոնախաձեռնություններին և մասնագետների օգնությամբ պարզաբանում դրանք:

«9.11» հաղորդաշարը ներկայացնում է քննարկումներ Արտակարգ իրավիճակների նախարարության մասնագետների հետ տարերային աղետների և կենցաղում հանդիպող վտանգների մասին:

«Հա՛ֆ, մյաու՛»-ն հաղորդում է կենդանասերների համար:

«Պստիկաշեն»-ը հաղորդում է ամենափոքրերի համար. զրույցներ տարբեր թեմաների շուրջ՝ փոքրիկների մասնակցությամբ, հանելուկներ, հեքիաթներ, հետաքրքրաշարժ մաթեմատիկա:

«Ֆինանսական գրագիտություն» հաղորդումը պատկերացում է տալիս դրամի ծախսի մասին, թե ինչպես կարելի է դրամ աշխատել ու կառավարել ծախսերը:

«Ինչուիկների աշխարհում» հաղորդաշարի ընթացքում փոքրիկ գիտունիկները գտնում են տարբեր հարցերի պատասխաններ:

«Սովորում ենք սովորել» հաղորդաշարի ընթացքում հրավիրված մասնագետները՝ ուսուցիչներ, դասախոսներ, կրթության փորձագետներ, ներկայացնում են այսօրվա կրթական խնդիրները, խոսում են դժվարությունների մասին և ելքեր առաջարկում:

«Տնային աշխատանք մասնագետի հետ» հաղորդաշարի ընթացքում կրթության մասնագետը ներկայացնում է տնային աշխատանք կատարելու նոր տարբերակ:

«Փոքրիկ բացահայտում ամեն օր» հաղորդաշարը ներկայացնում Է ամեն օր մի նոր ու հետաքրքիր պատմություն շրջապատող աշխարհի՝ իրերի ու երևույթների, ֆիզիկայի, երկրաչափության, քիմիական ռեակցիաների, արվեստի, գրականության ու երաժշտության մասին, միաժամանակ, բացահայտում, թե որքան բան է փոխկապակցված մեզ շրջապատող աշխարհում:

Տեղեկատվական հաղորդումներ

«Կանաչ մոլորակ» հաղորդաշարը ճանաչողական, ուսուցողական զրույցների շարք է բուսական, կենդանական աշխարհի և բնության մասին:

«Առողջության այբուբեն»-ում ներկայացվում են օգտակար խորհուրդներ ու տեղեկություններ առողջ ապրելակերպի համար:

«Հայկական էսքիզներ» հաղորդաշարը ներկայացնում է զրույցներ Հայաստանի պատմամշակութային արժեքների, բնության հուշարձանների, ինչպես նաև բնաշխարհի առանձնահատկությունների մասին:

«Ռադիոբացիկ» հաղորդաշարի ընթացքում երեխաները կարճ տեղեկություններ են ներկայացնում կրթական, մարզական, մշակութային թեմաների մասին:

«Նկարում ենք մեկ Հայաստան» հաղորդաշարի միջոցով Հայաստանի տարբեր մարզերի երեխաները պատմական, աշխարհագրական, ազգագրական տեղեկություններ են ներկայացնում իրենց բնակավայրի մասին:

«Սովորում ենք բնությունից» հաղորդաշարի ընթացքում վերհիշվում է, թե ինչ է սովորեցնում բնությունը և արդյոք մենք հետևում ենք բնության խորհուրդներին:

«Մայրիկի դպրոց» հաղորդաշարի ընթացքում մասնագետի հետ կազմակերպվում են զրույցներ հոգեբանական, տեղեկատվական ամենօրյա խնդիրների շուրջ:

«Մեկնարկ» հաղորդաշարի շրջանակում կազմակերպվում է կրթական խնդիրների քննարկում ոլորտի մասնագետների և պատասխանատուների հետ:

«Հայրիկի դասերը» հաղորդումն անդրադառնում է ծնողավարության կարևոր խնդիրներին՝ մեծերի և երեխաների փոխհարաբերություններին, հոգեբանական առանձնահատկություններին, երեխաների հետ ճիշտ շփվելու հմտություններին:

«Հայթեք լուրեր» հաղորդումը տեխնոաշխարհի նորությունների մասին է:

«Ռադիոլաբ» հաղորդաշարը ներկայացնում է նորություններ, նախագծեր ու նախաձեռնություններ տեխնոլոգիաների ոլորտում:

Մշակութային հաղորդումներ

«Մանկական ռադիոթատրոնի ժամ» հաղորդաշարի ընթացքում հնչում են ռադիոբեմադրություններ՝ հայ և համաշխարհային մանկագիրների և դրամատուրգների ստեղծագործությունների հիման վրա:

«Ռադիոարվեստանոց» հաղորդաշարն առաջարկում է ռադիոակնարկներ արվեստագետների, ստեղծագործող երեխաների և պատանիների մասին:

Երաժշտական հաղորդումներ

«Հիթ 1»-ը երաժշտական հաղորդաշար է պատանիների ու ավագ ռադիոլսողների համար:

Ժամանցային հաղորդումներ

«Հոպլյա հեքիաթ»-ը ուսուցողական հաղորդաշար է փոքրերի և մեծերի համար:

«Համեղ բրդուճ» հաղորդումը խոհարարական գաղտնիքների և տարբեր կերակրատեսակների մասին է: Հաղորդաշարի ընթացքում հնչում են խորհուրդներ սկսնակ խոհարարների համար:

«Փոքրիկ հեքիաթասացներ» հաղորդման ընթացքում երեխաները հեքիաթներ են պատմում ու նշում, թե ինչ սովորեցին:

«Վաղորդյան զանգակներ»-ը հումորային պատումների շարք է՝ դպրոցականների կյանքի և առօրյայի մասին:

«ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈ ԷՅԷՄ» («ՉՈՐՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ») ԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

«Առաջին ծրագիր» ռադիոալիքի հիմնական բովանդակությունը հեռարձակվել է նաև 69.7 ՄՀց հաճախականությամբ (Երևանում և հարակից շրջաններում) «Հանրային ռադիո էյէմ» («Չորրորդ ծրագիր») լսողական ծրագրով, որով նաև հեռարձակվել են Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների համար նախատեսված ամենօրյա հաղորդումները 4 լեզվով. եզդիերեն՝ 1 ժամ, քրդերեն՝ 30 րոպե, ասորերեն ու հունարեն՝ 15 րոպե տևողությամբ: Նույն ծրագրով ուղիղ եթերով հեռարձակվել են նաև ՀՀ Ազգային ժողովի դռնբաց նիստերը:

«ՀՈԳԵՎՈՐ - ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ» («ՌԱԴԻՈ ՎԵՄ») ԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

«Հոգևոր-մշակութային» ռադիոալիքի եթերում մասնավորապես հեռարձակվել են հոգևոր-մշակութային և կրթական հաղորդումներ, ինչպես նաև հայ ու համաշխարհային դասական կոմպոզիտորների ստեղծագործություններ: Մասնավորապես, հեռարձակվել են հետևյալ հոգևոր-մշակութային և մանկական հաղորդումները՝ «Ինքնություն և արժեքներ», «Հայկական վանքեր և սրբատեղիներ», «Սուրբ գրքի ներածություն», «Ոսկեփորիկ», «Հեքիաթի ժամ», «Գրական ընտրանի», «Արվեստի երանգներ», «Օպերային թատրոնի գոհարներ», «Հայոց պատմության էջեր», «Համաշխարհային դասական երաժշտություն», «Ճաշոցով նախատեսված ընթերցումներ.Նարեկացի», «Գիրք սաղմոսաց», «Ընթերցումներ Եկեղեցու հայրերի գործերից», «Հոգևոր զրույցներ», «Մտորումներ»:

«ՄՇԱԿՈՒՅԹ» (ԱՌՑԱՆՑ) ԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մշակութային առցանց ալիքը հասանելի է mshakuyt.armradio.am կայքէջում: Հաղորդացանցում ներառված է ավելի քան 20 հաղորդաշար Հանրային ռադիոյի ֆոնդից, հնչում է ազգային և դասական երաժշտություն: Մասնավորապես. «Գրեթե 100 տարի», «Ասացողը», «Իմ երգը», «Ազդ անցյալից», «Կենդանի ձայնադարան», «Մոռացված ֆիլմերի ստվերները», «Խոսքի տարածություն», «15 րոպեն քիչ է», «Մենք և մեր բառերը», «Գերդաստաններ», «Արմատներ», «Գիրք ճանապարհային», «Մեր ձայնադարանի ֆոնդից», «Պոեզիա», «Ազգային պար», «Հայագիտակ», «Ռադիոթատրոն», Դասական երաժշտությունը և մենք», «Բարձր գրականություն», «Երաժշտական եռանկյունի», «Խոսուն գրականություն», «Կինո նոն գրատա» հաղորդաշարերը:

«ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԱՅԼ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ» ԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (առցանց)

«Երևանն է խոսում». ամենօրյա հաղորդումներ 10 լեզվով (եզդիերեն, քրդերեն, ադրբեջաներեն, թուրքերեն, հունարեն, վրացերեն, ասորերեն, արաբերեն, ռուսերեն և պարսկերեն): Հաղորդումները ներկայացրել են հայաստանյան իրադարձությունները: Հաղորդումների ձայնագրությունները և տեքստերը տեղադրվել են նաև www.armradio.am կայքէջում:

Հայաստանի Հանրային ռադիոընկերությունը, այսպիսով, լիարժեքորեն կատարում է «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական Խարտիայի»՝ ռադիոհաղորդումներին վերաբերող պահանջները:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ստորև ներկայացնում ենք Հանրային ռադիոընկերության երաժշտական կոլեկտիվների 2025 թվականի համերգային և ֆոնդավորման գործունեության մանրամասները:

Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների վաստակավոր անսամբլ

Միջոցառման անվանումը	Անցկացման վայրը	Ամսաթիվ
«Ես իմ անուշ Հայաստանի » Հովհաննես Բադալյանի 100 ամյակին նվիրված համերգ	«Արամ Խաչատրյան» համերգասրահ	28.04.2025
Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր» լսողական ծրագրի «Երաժշտական առավոտ» հաղորդաշար. նվիրված Վաչե Հովսեփյանի, Օֆելյա Համբարձումյանի և Հովհաննես Բադալյանի հոբելյաններին:	Հանրային Ռադիոյի ձայնագրման ստուդիա-համերգասրահ	20.12.2025

Էստրադային սիմֆոնիկ նվագախումբ

Միջոցառման անվանումը	Անցկացման վայրը	Ամսաթիվ
Համերգ՝ նվիրված Շառլ Ազնավուրին	«Արամ Խաչատրյան» համերգասրահ	27.02.2025
«Ղազախստանի Հանրապետության մշակույթի օրերը Հայաստանի Հանրապետությունում»: Համերգ՝ հայ-ղազախական նվագախմբերի և երգիչների համատեղությամբ:	«Արամ Խաչատրյան» համերգասրահ	19.03.2025
Համերգ «Էլվինա Մակարյան. տրիբյուտ»	«Արամ Խաչատրյան» համերգասրահ	27.03.2025
Երեխաների պաշտպանության օրվան նվիրված «Վառ ժպտա» խորագրով համերգ «Արևիկ» մանկապատանեկան անսամբլի հետ համատեղ	«Արամ Խաչատրյան» համերգասրահ	03.06.2025
«From me to Aznavour» խորագրով համերգ՝ նվիրված Շառլ Ազնավուրին	«Արամ Խաչատրյան» համերգասրահ	15.06.2025
«The music that lives» խորագրով համերգ՝ նվիրված Առնո Բաբաջանյանին	«Արամ Խաչատրյան» համերգասրահ	27.09.2025
«Ալ.Աճեմյան 100» հոբելյանական համերգ «Մոռացում չկա» խորագրով	«Արամ Խաչատրյան» համերգասրահ	16.11.2025
Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր» լսողական ծրագրի «Երաժշտական առավոտ» հաղորդաշար, Ամանորյա համերգ	Հանրային Ռադիոյի ձայնագրման ստուդիա-համերգասրահ	27.12.2025

«Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր անսամբլ

Միջոցառման անվանումը	Անցկացման վայրը	Ամսաթիվ
Համերգ «Վարդատոն»՝ նվիրված Սայաթ-Նովային	Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հարակից այգի	25.05.2025
Խաչքարի բացմանը նվիրված համերգ	Ջավախք, գյուղ Հեշտիա	08.09.2025
Առաջին ալիք. «Երգ երգոց» հաղորդաշար, ժամանակակից աշուղներին նվիրված ծրագիր	Հայաստանի հանրային հեռուստատեսություն	15.09.2025
«Երգ երգոց» հաղորդաշար:Աշուղներին նվիրված ծրագիր «Նարեկացի» նվագախմբի հետ համատեղ:	Հայաստանի հանրային հեռուստատեսություն	18.11.2025

«Արևիկ» մանկապատանեկան անսամբլ

Միջոցառման անվանումը	Անցկացման վայրը	Ամսաթիվ
ՀՀ ԱՆ Յոլյանի անվան արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոնի կազմակերպած համերգ	ք. Երևան «Գրանդ Հոթել» -ի համերգասրահ	22.02.2025
Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր» լսողական ծրագրի «Երաժշտական առավոտ» հաղորդաշար. Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված ծրագիր	Հանրային Ռադիոյի ձայնագրման ստուդիա-համերգասրահ	31.05.2025
Համերգ Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված	ք. Հրազդան, Անկախության հրապարակ	01.06.2025
Երեխաների պաշտպանության օրվան նվիրված «Վառ ժպտա» խորագրով համերգ Հանրային ռադիոընկերության Էստրադային-սիմֆոնիկ նվագախմբի հետ համատեղ	«Արամ Խաչատրյան» համերգասրահ	03.06.2025
«Համազգային վստահություն» խորհրդի կողմից կազմակերպված «Ոսկե դափնի» մրցանակաբաշխություն: Դափնեկիր՝ Վահե Հայրապետյան	ք. Երևան «Յանս» ակումբ	26.09.2025
Համերգ՝ նվիրված Ավ. Իսահակյանի 150 ամյակին	Ավ. Իսահակյանի տուն-թանգարան	30.10.2025
Համերգ Նուբարաշեն համայնքի կենտրոնական զբոսայգու տոնածառի լույսերի վառման արարողության միջոցառմանը	Նուբարաշեն համայնքի կենտրոնական զբոսայգի	14.12.2025
Ամանորյա միջոցառում նախատեսված «Զինապահ» հիմնադրամի շահառուների երեխաների համար	ՀՀ Կենտրոնական բանկի ներքին բակ	25.12.2025

Միջոցառման անվանումը	Անցկացման վայրը	Ամսաթիվ
Տարեկան հաշվետու համերգ	Հանրային Ռադիոյի Արևիկի դահլիճ	26.12.2025

Հանրային ռադիոընկերության ձայնագրման ստուդիայում իրականացված այլ միջոցառումներ

Միջոցառման անվանումը	Պատասխանատու / Կատարող	Ամսաթիվ
«JazZara» համերգային ծրագրի շնորհանդես	Զարուհի Բաբայան և JAZZARA բենդ	29.03.2025

ՁԱՅՆԱԳՐՄԱՆ 6-ՐԴ ՍՏՈՒԴԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2025 թվականին իրականացվել է 456 ժ. ձայնագրություն և 393 ժ. մշակում:

Պատրաստի նյութերի ծավալը կազմում է ավելի քան 78 ժամ:

Հանձնվել է.

- Հանրային ռադիոյի ֆոնդավորման բաժին՝ 90 ստեղծագործություն, տևողությունը՝ 5 ժամ:
- Երաժշտական խմբագրություն՝ 75 ստեղծագործություն, տևողությունը՝ 4.22 ժամ:
- «Արևիկ» ռադիոկայան՝ 15 ստեղծագործություն, տևողությունը՝ 42 րոպե:
- Ծրագրերի բաժին՝ 4 համերգ, տևողությունը՝ ավելի քան 5 ժամ, նաև «Երաժշտական առավոտ» հաղորդաշարի 37 թողարկում, տևողությունը՝ 54 ժամ, «Կենդանի ձայնադարան» հաղորդաշարի 28 թողարկում, տևողությունը՝ 9 ժամ:

ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ

2025 թվականի ընթացքում Հանրային ռադիոընկերության հաղորդումները հեռարձակվել են սահմանված որակական և տեխնիկական չափանիշներին համապատասխան: «Առաջին ծրագիր» ռադիոալիքը հեռարձակվել է ՀՀ ողջ տարածքում օրական 24 ժամ՝ գերկարճ տիրույթի հաճախականություններով (Երևանում 107.7 ՄՀց հաճախականությամբ):

«Իմ ռադիո» ռադիոալիքը հեռարձակվել է Երևանում և հարակից շրջաններում, օրական 24 ժամ, 01.01-31.10՝ 103.8 ՄՀց հաճախականությամբ, իսկ 01.11-ից սկսած՝ 98.3 հաճախականությամբ:

«Արևիկ» մայրաքաղաքային սփռման ալիքը հեռարձակվել է Երևանում և հարակից շրջաններում, օրական 24 ժամ՝ 97.3 ՄՀց հաճախականությամբ:

«Հոգևոր-մշակութային» ռադիոալիքը հեռարձակվել է Երևանում և հարակից շրջաններում՝ օրական 24 ժամ՝ 91.1 ՄՀց հաճախականությամբ:

Հեռարձակման աշխատանքներն իրականացվել են «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերության միջոցով, Հանրային ռադիոընկերության սեփական տեխնիկական միջոցներով, ինչպես նաև համացանցով:

Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր»-ը հեռարձակվում է նաև առցանց՝ www.armradio.am կայքէջում, «Երկրորդ ծրագիրը»՝ imradio.armradio.am, «Երրորդ ծրագիրը»՝ arevik.armradio.am, Մշակութային առցանց ալիքը՝ mshakuyt.armradio.am կայքէջով: www.armradio.am կայքէջի բովանդակությունը հասանելի է նաև անգլերեն, ռուսերեն, ադրբեջաներեն, թուրքերեն, վրացերեն, ասորերեն, հունարեն, քրդերեն, եզդիերեն, արաբերեն ու պարսկերեն:

2025 թվականին ընդլայնվել է Հանրային ռադիոընկերության Առաջին ծրագրի և Երկրորդ ծրագրի հաղորդումների, լրատվական ռեպորտաժների ցուցադրումը համացանցում, ինչը մեծացրել է պաշտոնական ֆեյսբուքյան էջի և ընկերության կայքէջի այցելությունները: Օրգանիկ դիտումներն ավելացել են ավելի քան 50 տոկոսով, իսկ գովազդով խթանվածները՝ ավելի քան 43 տոկոսով: Լրատվական խմբագրությունն ամսական միջինը 35 վիդեոռեպորտաժ է պատրաստել: Դրանցից 4-ն ապահովել են ավելի քան 100 հազար դիտում:

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հանրային ռադիոընկերությունը 2025 թվականին իր գործունեությունն իրականացրել է ՀՀ պետական բյուջեից ռադիո ծառայությունների մատուցման դիմաց ստացված գումարի, առևտրային գովազդից, եթերաժամանակի տրամադրումից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

Ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով «ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով 11003 «Ռադիո ծառայություններ» միջոցառմամբ Հանրային ռադիոընկերությանը հատկացվել է 970 944.4 հազ.դրամ, ներառյալ ավելացված արժեքի հարկի գումարը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային ռադիոընկերության կողմից 2025 թվականին ստացված եկամուտները՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

Աղյուսակ 5

2025 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից ստացված եկամուտները՝ ըստ ստացման աղբյուրների

(հազ.դրամ)

Հ/Հ	Եկամտի տեսակ	Գումար
1	Ռադիո ծառայությունների մատուցումից ՀՀ պետական բյուջեից եկամուտ	809 120
2	Դրամաշնորհներից եկամուտ	2 900
3	Առևտրային եկամուտներ, այդ թվում՝	112 222
3.1	*Առևտրային գովազդից եկամուտ*	*26 539*
3.2	*Վարձավճարներից եկամուտ*	*59 479*
3.3	*Հաղորդումների պատրաստում և հեռարձակում*	*7 316*
3.4	*Երաժշտական ձայնագրման ծառայություններ*	*6 890*
3.5	*Երաժշտախմբերի կողմից մատուցված ծառայություններ*	*3 766*
3.6	*Երաժշտական ստուդիայի վարձակալություն*	*8 232*
4	Ֆինանսական եկամուտներ	18 634
5	Այլ եկամուտ	3 516
	Ընդամենը	**946 392**

Աղյուսակ 5-ի **«Դրամաշնորհներից եկամուտ»** տողում ներառված են ՀՀ պետական բյուջեից նախորդ տարիներին ստացված կապիտալ դրամաշնորհների միջոցներով ձեռք բերված, ինչպես նաև անհատույց ստացված ակտիվների գծով եկամուտները:

2025 թվականին Հանրային ռադիոընկերությունը ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային ռադիոընկերության 2025 թվականի գործունեության ընթացքում կատարված փաստացի ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

Աղյուսակ 6

2025 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ուղղությունների

(հազ.դրամ)

Հ/Հ	Ծախսային ուղղություններ	Գումար
1	Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ	739 262
2	Հեռարձակման ծախսեր	71 456
3	Մաշվածք և ամորտիզացիա	138 920
4	Այլ ծախսեր	65 473
Ընդամենը		**1 015 111**

Աշխատավարձերի, հավելավճարների և այլ վարձատրությունների գծով ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 72.8%-ը և ներառել են հաստիքային աշխատողների և ստեղծագործական խմբերի աշխատանքի վարձատրության ծախսերը:

Հեռարձակման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 7.0%-ը և ներառել են ՀՀ տարածքում, ինտերնետային առցանց հեռարձակման ծախսերը:

Մաշվածքի և ամորտիզացիայի գծով ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 13.7%-ը:

Այլ ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 6.5%-ը և ներառել են գրասենյակային ապրանքների և նյութերի, արտադրական նյութերի և պահեստամասերի, լրատվության և այլ արտաքին տեղեկատվության, տնտեսական և ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման, տրանսպորտային միջոցների շահագործման, շենքերի և շինությունների պահպանման, կապի և կոմունալ ծառայությունների ձեռքբերման, գործուղման ծախսերը, հարկերը և տուրքերը (ներառյալ հետաձգված հարկերի գծով փոխհատուցումը):

Այսպիսով, 2025 թվականին Հանրային ռադիոընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված **զուտ վնասը** կազմել է 68 719 հազ.դրամ:

2025 թվականի գործունեության ընթացքում **հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների** ձևով ՀՀ պետական բյուջե է վճարվել 359 099 հազ.դրամ:

2025 թվականին ձեռք են բերվել համակարգչային և հեռարձակման համար նախատեսված **տեխնիկական միջոցներ**, **ձայնագրման տեխնիկական միջոցներ, գրասենյակային գույք** և այլ հիմնական միջոցներ՝ 8 128 հազ.դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժողությամբ, ինչպես նաև կատարվել են **հիմնանորոգման աշխատանքներ** 9 404 հազ.դրամի ծավալով (ներառյալ ԱԱՀ): Ընկերության Ոսկե ֆոնդի արխիվի թվայնացման շրջանակներում իրականացվել են 23 297 հազ.դրամ ընդհանուր արժողությամբ **թվայնացման աշխատանքներ**:

Հանրապետական սփռման Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը 2025 թվականին հեռարձակել է «Շողակաթ» տեսալսողական ծրագիրը: Հեռուստաընկերությունը, հավատարիմ իր որդեգրած քաղաքականությանը, պատրաստել և հեռարձակել է.

- ✓ մարդասիրական, քրիստոնեական արժեքների և կենսակերպի խրախուսմանն ուղղված հաղորդումներ,
- ✓ ազգային և համաշխարհային մշակութային ժառանգությունը ներկայացնող կրթական և ճանաչողական հաղորդումներ,
- ✓ կրթության և մշակույթի ոլորտներում տեղի ունեցած նշանակալի իրադարձություններն իրազեկող հաղորդումներ,
- ✓ մանկական ճանաչողական և ժամանցային հաղորդումներ,
- ✓ ազգային, հոգևոր ավանդույթների ձևավորման և պահպանության գործում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու բացառիկ դերը ներկայացնող հաղորդումներ.

ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է 2025 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների ծավալները՝ ըստ տեսալսողական ծրագրերի առանձին բաժինների:

Աղյուսակ 7

2025 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների ծավալները՝ ըստ տեսալսողական ծրագրերի առանձին բաժինների

Հ/Հ	Տեսալսողական ծրագրերի առանձին բաժիններ	Տեսալսողական ծրագրերի առանձին բաժինների հեռարձակման ծավալ (ժամ)
1	Հոգևոր - մշակութային լրատվություն	483
2	Մշակութային հաղորդումներ	2 167
3	Հոգևոր հաղորդումներ	1 235
4	Երաժշտական ծրագրեր և համերգներ	1 040
5	Մանկական հաղորդումներ	1 100
6	Ուսումնական և այլ հաղորդումներ	1 161
7	Գիտահանրամատչելի, ուսումնական գեղարվեստական և	1 573

Հ/Հ	Տեսալսողական ծրագրերի առանձին բաժիններ	Տեսալսողական ծրագրերի առանձին բաժինների հեռարձակման ծավալ (ժամ)
	վավերագրական կինոնկարներ	
	Ընդամենը	**8 759**

Գծապատկեր 6. Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների ծավալները (%)



ՀՈԳԵՎՈՐ- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՇՈՂԱԿԱԹ» ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ

Մշակութային հաղորդումներ և լրատվություն

«Երաժշտական հաղորդաշար»

Հայաստանում գործող դասական, ժողովրդական և հոգևոր երգչախմբերի և մենակատարների կատարմամբ ստեղծագործություններ:

«Օր 6-րդ»

Տաղավարային զրույցներ արվեստագետների և արվեստաբանների հետ, հեղինակ և հաղորդավար՝ Մարինա Բաղդագյուլյան: Հեռարձակվել է շաբաթական երկու անգամ:

«Սահմանին»

Սահմանամերձ գյուղերի պատմամշակութային արժեքները, գյուղացիների կենսընթացը ներկայացնող հաղորդաշար: Հեռարձակվել է շաբաթական մեկ անգամ:

«Արտֆոկուս»

Հաղորդաշարը ներկայացնում է շաբաթվա կարևոր և հիշատակելի մշակութային իրադարձությունները, կազմակերպում դրանց շուրջ քննարկում: Հեռարձակվել է յուրաքանչյուր կիրակի, ժամը 20:00-ին և 22:30-ին, և կրկնվել երկուշաբթի՝ 08:05 –ին և կեսօրին:

«Մշակութային լրատվություն»

Տեղեկատվական ամփոփ անդրադարձ նախորդ շաբաթվա ընթացքում կատարված և առաջիկա շաբաթվա ընթացքում սպասվող մշակութային իրադարձություններին: Հեռարձակվել է յուրաքանչյուր կիրակի, ժամը 20:30-ին և 23:00-ին, և կրկնվել երկուշաբթի՝ 08:35 –ին և կեսօրին:

«Զուգահեռ ընթերցումներ»

Գրականագիտական բանավեճի միջոցով դասական ու ժամանակակից գրական ստեղծագործությունները, գրական երևույթներն ու գրահրատարակչությանն առնչվող թեմաները ներկայացնող հաղորդաշար: Հեռարձակվել է յուրաքանչյուր շաբաթ օրը՝ ժամը 22:00-ին և կրկնվել է կիրակի և երեքշաբթի օրերին:

«Կյանքը պատերազմից հետո»

Արցախյան պատերազմներում վիրավորված զինվորների հետպատերազմյան կյանքը ներկայացնող տեսաֆիլմաշար: Հեռարձակվել է յուրաքանչյուր երկուշաբթի՝ ժամը 21:00-ին, կրկնվել է երեքշաբթի և կիրակի օրերին:

«Քո արվեստը դպրոցում»

Հայտնի արվեստագետների վարպետության դասերի շարք դպրոցահասակների համար: Հեռարձակվել է երեքշաբթի և հինգշաբթի օրերին, ժամը՝ 21:00-ին, կրկնվել է չորեքշաբթի և ուրբաթ օրերին:

«Երրորդ հազարամյակ»

Տաղավարային վերլուծական հաղորդաշար փորձագետների ու մասնագետների մասնակցությամբ՝ ազգային, պետական կյանքում արդիական թեմաների շուրջ: Հեռարձակվել է յուրաքանչյուր հինգշաբթի, ժամը՝ 22:00-ին, կրկնվել է շաբաթ օրը:

«Պահոց խոհանոց»

Հայկական պահոց ուտեստները և դրանց պատրաստման բաղադրատոմսերը ներկայացնող հաղորդաշար:

«Հանիրավի մոռացվածները»

Տեսաֆիլմաշար հայ մշակույթի և գիտության մոռացված գործիչների մասին:

«Նկարիչը»

Հաղորդաշար ժամանակակից արվեստագետների մասին:

«Վարպետներ»

Հաղորդաշար արհեստի և արվեստի բնագավառում իրենց ուրույն դերն ունեցող մարդկանց մասին:

«Նշանավոր ճեմարանականներ»

Հաղորդաշար Գևորգյան հոգևոր ճեմարանի նշանավոր սաների և ուսուցիչների մասին:

«Ազգապատում»

Պատմաճանաչողական հաղորդաշար՝ Հայաստանի և Հայ առաքելական եկեղեցու պատմությունը՝ ըստ Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում» պատմագրության:

«Երախտապարտ ենք»

Հաղորդաշար Արցախյան պատերազմի մասնակից հոգևորականների, բժիշկների, զինվորականների մասին:

«Պատրաստված է Հայաստանում»

Հաղորդաշար մերօրյա հայ վարպետների ձեռագործ աշխատանքների մասին:

Հեռուստահաղորդումներ՝ մշակութային թեմաներով սեփական արտադրության վավերագրական ֆիլմեր և հաղորդումներ:

Հոգևոր հաղորդումներ

«Եկեղեցական կյանք»

Տեղեկատվական հաղորդաշար Մայր Աթոռի պաշտոնական լուրերի և Հայ Առաքելական Ս. Եկեղեցու թեմական կյանքի մասին: Հեռարձակվել է երկուշաբթի և ուրբաթ օրերին, կրկնվել՝ երեքշաբթի և շաբաթ օրերին: Տաղավար տոներին եղել են հատուկ թողարկումներ:

«Համատես Ավետարաններ»

Մեկնողական հաղորդաշար ավետարանական դրվագների և դրանց արդիության շուրջ: Հեռարձակվել է յուրաքանչյուր երեքշաբթի՝ 21:00-ին, կրկնվել է չորեքշաբթի և կիրակի օրերին:

«Օրվա խորհուրդ»

Հաղորդաշար յուրաքանչյուր օրվա ընթերցվածքի խորհրդի բացատրության մասին: Հեռարձակվել է ամեն օր:

«Հարց ու պատասխան»

Հեռուստադիտողների և սոցցանցային օգտատերերի տարաբնույթ հարցերին պատասխանում են հոգևորականները: Հեռարձակվել է յուրաքանչյուր կիրակի՝ 21:00-ին, կրկնվել է հաջորդ օրը:

«Ժամերգություն»

Աղոթքների և սաղմոսների ընթերցանություն, շարականների երգեցողություն:

«Առաքինություններ»

Մեկնողական հաղորդաշար քրիստոնեական առաքինությունների մասին:

Հեռուստահաղորդումներ՝ հոգևոր թեմաներով սեփական արտադրության վավերագրական ֆիլմեր և հաղորդումներ:

Երաժշտական ծրագրեր և համերգներ

«Երգի պատմություն»

Հաղորդաշար հայկական ռոք, ջազ, ֆոլկ խմբերի որևէ երգի ստեղծման պատմության մասին:

«Փորձասենյակ»

Հայաստանում գործող երաժշտական և թատերական խմբերին ներկայացնող հաղորդաշար:

Հեռարձակվել են **համերգային ծրագրեր**, կոմպոզիտորների, դիրիժորների, դասական և այլ ժանրերի ստեղծագործությունների մասին պատմող **երաժշտական ֆիլմեր և հաղորդումներ**:

Մանկական հաղորդումներ

«Մանկական երգ»

«Երգատեղ» ստուդիայի սաները սովորում են հայ ժամանակակից կոմպոզիտորների, ժողովրդական և Կոմիտասի հեղինակած երգեր:

«Հին ու նոր հեքիաթներ»

Մանկական անիմացիոն ֆիլմաշար: Հեռարձակվել է ամեն օր, երեկոյան ժամը 20:50-ին:

«Ինչն ինչոց է ըստ Պիստակի»

Մանկական անիմացիոն հանրամատչելի հաղորդաշար՝ հանրագիտարանային գիտելիքների ուսուցման նպատակով:

«Ներուժ»

Մանկապատանեկան ստեղծագործական կրթօջախների գործունեությունը ներկայացնող հաղորդաշար:

«Պատումիկներ Աստվածաշնչից»

Անիմացիոն մանկական ֆիլմաշար աստվածաշնչյան պատմությունների հիման վրա:

«Մանուկ դպիրներ»

Հաղորդաշար եկեղեցիներում սպասավորող երեխաների, նրանց առօրյայի ու հետաքրքրությունների մասին:

Հեռարձակվել են **մանկական ճանաչողական, անիմացիոն ֆիլմեր, մուլտսերիալներ՝** ամեն օր, երեկոյան 20:00-21:00 և կրկնվել հաջորդ օրը՝ մինչև կեսօր:

Ուսումնական և այլ հաղորդումներ

«Սովորում ենք երգել»

Հոգևոր երգի ուսուցման տեսադասեր դպրոցահասակ պատանիների հետ: Վարում է երաժիշտ Շահե Քեշիշյանը: Հեռարձակվել է շաբաթական երկու անգամ:

«Տաղավարում. Գրականության և արվեստի շուրջ»

Հաղորդաշար ազգային մշակույթի՝ գրականության, թատրոնի, կինոյի ու կերպարվեստի հայ դասականների կյանքի ու հանրահայտ ստեղծագործությունների մասին: Վարում է արձակագիր Հովհաննես Երանյանը: Հեռարձակվել է շաբաթական երկու անգամ:

«Տաղավարում. Զրույցներ կրթության շուրջ»

Տաղավարային քննարկումներ գիտության և կրթության հիմնախնդիրների և դրանց լուծումների, ինչպես նաև գիտակրթական տարբեր նախաձեռնությունների մասին: Հեռարձակվել է յուրաքանչյուր չորեքշաբթի՝ 22:00-ին, կրկնվել է հինգշաբթի և շաբաթ օրերին:

«Ճեմարան. դասախոսություններ»

Դասախոսություններ Գևորգյան հոգևոր ճեմարանում՝ պատմության, աշխարհագրության, գրականության, կրոնագիտության, հասարակագիտության թեմաներով: Հեռարձակվել է շաբաթական մեկ անգամ:

«Աստվածաշնչյան դարձվածքներ»

Ժողովրդական խոսքուզրույցում տարածված դարձվածքների բացատրությունը ներկայացնող հաղորդաշար: Հեռարձակվել է շաբաթական մեկ անգամ:

«Ժառանգություն»

Պատմամշակութային վայրերի և հուշարձանների մասին ճանաչողական ֆիլմաշար, որը ներկայացնում է հայ մշակույթի նյութական և ոչ նյութական ժառանգությունն ու ներկան: Հեռարձակվել է շաբաթական մեկ անգամ:

«Հայտնի և անհայտ կինո»

Հաղորդաշար հայ և արտասահմանյան կինոյի երևելի դեմքերի մասին: Հեռարձակվել է շաբաթական մեկ անգամ:

«Հանրագիտարան»

Հեռուստաֆիլմաշար հայ և համաշխարհային գիտության ու մշակույթի գործիչների մասին:

«Հողը չի սպասում»

Հաղորդաշար գյուղի, գյուղացու առօրյայի ու աշխատանքի մասին:

«Թանգարաններ»

Հայաստանի թանգարանների մասին պատմող հաղորդաշար: Հեռարձակվել է շաբաթական մեկ անգամ:

Հեռուստահաղորդումներ՝ կրթական թեմաներով սեփական արտադրության վավերագրական տեսաֆիլմեր և հաղորդումներ:

Գիտահանրամատչելի, ուսումնական, վավերագրական կինոնկարներ:

Հեռուստացանցում գեղարվեստական ֆիլմերը ցուցադրվում են ամեն օր, երեկոյան 23:00-ին, կրկնվում հաջորդ օրը՝ կեսօրին: Վավերագրական ֆիլմերը, հեռուստասերիալները եթերում են լինում 17:00-ից հետո և կրկնվում են հաջորդ օրը՝ առավոտյան: Գեղարվեստական և վավերագրական կինոնկարները կրկնօրինակված են հայերեն և թարգմանված ժեստերի լեզվով:

ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության ծրագիրը հեռարձակվում է ՀՀ ամբողջ տարածքում: Հեռարձակումը 24-ժամյա է, հեռարձակման տարեկան ընդհանուր տևողությունը կազմել է 8 759 ժամ: Ժեստերի լեզվով թարգմանված գեղարվեստական և մուլտիպլիկացիոն ֆիլմերի և սերիալների, ինչպես նաև կրթական, մշակութային, սոցիալական ուղղություններով սեփական հաղորդումների ցուցադրության ծավալը կազմել է 973 ժամ (մեկ ցուցադրության և մեկ կրկնության հաշվարկով): Հեռարձակումը իրականացվում է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի միջոցով:

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը 2025 թվականին իր գործունեությունն իրականացրել է ՀՀ պետական բյուջեից հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայությունների մատուցման դիմաց ստացված գումարի և առևտրային գովազդից ստացվող հասույթի հաշվին: Հոգևոր-մշակութային հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով «ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով 11005 «Կրթական-մշակութային ուղղվածության հեռուստատեսային ծառայություններ» միջոցառմամբ Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությանը հատկացվել է 221 105.5 հազ.դրամ, ներառյալ ավելացված արժեքի հարկի գումարը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից 2025 թվականին ստացված եկամուտները՝ ըստ եկամուտների ստացման աղբյուրների:

Աղյուսակ 8

2025 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից ստացված եկամուտները՝ ըստ ստացման աղբյուրների

(հազ.դրամ)

Հ/Հ	Եկամտի տեսակ	Գումար
1	Հեռուստատեսային ծառայությունների մատուցումից ՀՀ պետական բյուջեից եկամուտ	184 255
2	Գովազդից եկամուտ	4 565
3	Դրամաշնորհից եկամուտ	4 836
Ընդամենը		**193 656**

2025 թվականին «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը» պետական բյուջեից ստացված եկամուտներն ուղղել է օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը: Աղյուսակ 9-ում ներկայացված են Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության 2025 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

Աղյուսակ 9

2025 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կատարած ծախսերը՝ ըստ հիմնական ուղղությունների

(հազ.դրամ)

Հ/Հ	Ծախսային ուղղություններ	Գումար
1	Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ	99 156
2	Հեռուստահաղորդումների և ֆիլմերի հեռարձակման իրավունքների ձեռքբերման ծախսեր	23 432
3	Հեռարձակման ծախսեր	60 000
5	Մաշվածություն	4 836
6	Այլ ծախսեր	3 821
Ընդամենը		**191 245**

Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրությունների գծով ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 51.8%-ը և ներառել են հաստիքային աշխատողների և հաղորդումների ստեղծագործական խմբերի աշխատանքի վարձատրության ծախսերը:

Հեռուստահաղորդումների և ֆիլմերի հեռարձակման իրավունքների ձեռքբերման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 12.3 %-ը, **հեռարձակման ծախսերը**՝ 31.4 %-ը, **մաշվածության գծով ծախսերը**՝ 2.5 %-ը, այլ ծախսերը՝ 2.0 %-ը:

2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված **զուտ շահույթը** կազմել է 2 411 հազ.դրամ:

2025 թվականի գործունեության ընթացքում **հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների** ձևով ՀՀ պետական բյուջե է վճարվել 72 393 հազ.դրամ: